



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

«Սասնայ Ճռեր»-էն Տարի Մը Ետք

Այս շաբաթ լրացաւ «Սասնայ Ճռերու» գործողութեան առաջին տարեկիցը, երբ խումբ մը զինեալներ, որոնց մէջ նախկին ազատամարտիկներ, յարձակում գործելով, երկու շաբաթ շարունակ գրաւման տակ պահեցին Հայաստանի ոստիկանութեան կեդրոնը: Այդ օրերուն երեւանի մէջ տեղի ունեցան ծանր բախումներ՝ զինեալներուն զօրակցութիւն յայտնելու համար փողոց դուրս եկած հազարաւոր ցուցարարներու եւ իրաւապահներու միջեւ: Ստեղծուած պայթուցավտանգ իրավիճակը հանգուցալուծում գտաւ երբ, որոշ խոստումներու դիմաց, զինեալները վար դնելով իրենց զէնքերը անձնատուր եղան: Այս գործողութեան ընթացքին զոհուեցան երեք ոստիկաններ ու ծանր վիրաւորուեցան «Սասնայ Ճռերու» շարք մը անդամներ:

Ինչպէս դէպքերու ընթացքին, այս օրերուն եւս քննարկման առարկայ են զէնքի միջոցաւ քաղաքական հարցեր լուծելու նպատակաշարժարութիւնը: «Սասնայ Ճռերու» կողմնակիցները կը հաւատան որ, Հայաստանի մէջ սպառած ըլլալով իրավիճակ փոխելու բոլոր այլ տարբերակները, արդարացուած են բռնի միջոցներու օգտագործումը: Հակառակ տեսակէտի հեղինակները կը պնդեն որ, ժողովրդավարական երկիր կառուցելու ճանապարհին պէտք է բացառել բռնի միջոցներու օգտագործումը, որքան ալ դատապարտելի ըլլան իշխանութիւններու արարքները:

Այս օրերուն երեւանի մէջ կ'ընթանան միաժամանակ չորս դատական գործեր: Տեղի կ'ունենան «Սասնայ Ճռերու», ժիրայր Սէֆիլեանի, «Նորքի-Մարաշի» զինեալ խումբի դատական միստերը, որոնց վրայ կ'աւելնայ Արցախի պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Բաբաեանին առաջադրուած մեղադրանքները: Բոլոր այս դատական հարցերը, թէեւ իրարմէ անջատ, առնչուած են զինեալ յեղաշրջում իրակացնելու փորձերու հետ:

Վերջին տարիներուն նման դէպքերու յաճախականութիւնը պէտք էր մղած ըլլար իշխանութիւններուն, որոշ դասեր քաղելու եւ վերահաշուարկ կատարելու: Այս գծով լաւագոյն առիթը կրնար հանդիսանալ Ապրիլին կայացած խորհրդարանական ընտրութիւնները: Սակայն, անգամ մը եւս Հայաստանի ժողովուրդը զրկուեցաւ իր իսկական ներկայացուցիչները ընտրելու տարրական իրաւունքէն:

Դժբախտաբար նման պայմանները կրնան ծնիլ նոր «Սասնայ Ճռեր» առաւել վտանգելով պատերազմի մէջ գտնուող մեր հայրենիքը:

«ՄԱՍԻՍ»

«Ատրպէյճանին Զէնքի Վաճառքը Հայ-Ռուսական Յարաբերութիւններու Ամենացաւոտ Կողմն է». Սարգսեան

Ռուսիոյ կողմէ Ատրպէյճանին զէնք վաճառելը հայ-ռուսական յարաբերութիւններու ամենացաւոտ կողմն է: Այս մասին «Արմենիա» հեռուստաընկերութեան «Ռէպորտաժ» հաղորդումն ընթացքին յայտնած է նախագահ Սերժ Սարգսեան:

«Այդ խնդիրը հայ-ռուսական

բարեկամութեան, հայ-ռուսական ռազմական համագործակցութեան, ընդհանրապէս՝ մեր յարաբերութիւնների ամենացաւալի կողմն է: Այդ հարցը, իմ կարծիքով, ստուերում է շատ բան: Բայց միւս կողմից էլ կան հանգամանքներ, եւ միգուցէ այդ հանգամանքները մեզ համար ընդունելի չեն, բայց իրենց համար ընդունելի են: Դեռեւս որեւէ լուրջ բան չի պատահել: Եթէ ինչ-որ մի ժամանակ լուրջ հետեւանքներ լինեն, այն ժամանակ կարելի է մեղադրել: Իսկ եթէ լուրջ հետեւանքներ չլինեն, մենք դա պէտք է համարենք որպէս ռուսական կողմի երկարաժամկէտ քաղաքական գործունէութիւն՝ տարածաշրջանում իրավիճակը կայունացնելու համար», - յայտնած է նախագահ Սերժ Սարգսեան:



Սերժ ՍԱՐԳՍԵԱՆ ԲԱՆԱԿԱԽԻՆԻ ՏԱՐԱԳՈՎ ԵՂՈՅ Կ'ՈՒՆԵՄԱՅ ԻՆՏԵՆՏԻՎ ԽԱՐԳԱՊՈՅԻ ԸՆԹԱԳՔԻՆ

Ծառը շանում իրավիճակը կայունացնելու համար», - յայտնած է նախագահ Սերժ Սարգսեան:

Դիտարկման, որ Ատրպէյճանին զէնք վաճառելու մասին խօսակցութիւններուն Ռուսիա կը պատասխանէ, որ այդ մէկը պիտի չէ, բացի անկէ, այդպիսով Մոսկուա ռազմական հաւասարակշռութիւն կը պահպանէ հակամարտող երկիրներուն միջեւ, նախագահը նշած է, որ ռուսական կողմը պաշտօնապէս հրապարակաւ նման պատասխան չէ տուած: Ըստ Սերժ Սարգսեանի, ռուսական կողմը պաշտօնապէս կրնայ պատասխանել նախագահին

Շար.ը էջ 5

ՍԵՒԱՆ ՆՀԱՆԵԱՆ ՓԱԽՈՒՍԱՏ ՏՈՒԱԾ Է ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆՈՒՄԸ

Պոլսահայ մտաւորական, լեզուաբան Սեւան Նիշանեան պաշտօնապէս յայտարարուած է փախուստի մէջ գտնուող, անոր դէմ կաշահաւորելու մասին որոշում կայ: Այս մասին կը յայտնէ թրքական «Հուրրիէթ» թերթը:

Նիշանեան, որ 2014 թուականին բանտարկուած եւ դատապարտուած էր 17 տարուայ ազատազրկման, 14 Յուլիսին օգտուած էր բանտէն դուրս գալու թոյլտուութեան, սակայն այդպէս ալ ետ չէր վերադարձած Ֆոչայի բաց ռեժիմի բանտը:

Նիշանեան իր փախուստի մասին յայտնած էր «Թուրքի» վրայ կատարած գրառման միջոցով, ուր կ'ըստէր. «Թուշուր թուաւ տարրու մնացած ութսուն միլիոնին»:

Թրքական լրատուամիջոցներուն հետ զրոյցի ընթացքին պոլսահայ մտաւորական Նիշանեան խոստացած էր, որ երբ ժամանակը գալ, մանրամասնօրէն պիտի պատմէ, թէ ինչպէս փախած է բանտէն: Խօսելով այն մասին, թէ ինչու նման որոշում կայացուցած է, 2014 թուականին ազատազրկման մէջ գտնուող լեզուաբանն ըսած էր. «Մտածեցի, որ 3.5 տարին արդէն բաւական է, եկած է ժամանակը,



Պոլսահայ մտաւորական Սեւան Նիշանեան երբ պէտք է շունչ քաշել: Այս է ամէնը: Նման պայմաններու մէջ որոշում կայացուցի թուրքի թերութիւններէն օգտուելով դուրս գալ պետութեան վերահսկողութեան տարածքէն»:

«Թուրքիայէն փախչիլը շատ դիւրին է: Ինչպէս կը տեսնէք, լաւ գումարի առկայութեան պարագային բոլորն ալ կրնան փախչիլ: Կառուցներու մէջ եթէ գումարը տաս անվտանգութեան, շատ հանգիստ կրնաս փախչիլ», - ըսած էր մտաւորականը:

Շար.ը էջ 4

ՍԴՀԿ ԱՆՐՆՈՒՆԵԼԻ Կը Նկատ Ռազմավարական Դաշնակից Ռուսաստանի Կողմէ Ատրպէյճանին Զէնք Վաճառելը

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը Հայաստանի վարչութիւնը տարածած է յայտարարութիւն մը, անընդունելի նկատելով Ռուսաստանի կողմէ Ատրպէյճանի զէնքի վաճառքը:

«Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնն անընդունելի է համարում մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի Դաշնութեան կողմից Ատրպէյճանին զէնք վաճառելու հերթական խոշոր գործարքը, որը բացարձակապէս անհասկանալի է՝ հաշուի առնելով հայ-ռուսական յարաբերութիւնների ներկայ բարձր մակարդակն ու արդարացի գայրոյթ է առաջացնում մեր հասարակութիւնում:

«Ատրպէյճանին զինելու ռուսաստանեան այս քաղաքականութիւնը ոչ միայն ուղիղ վնասում է հայ-ռուսական յարաբերութիւններին, այլ նաեւ մեծ հարցականի տակ է դնում տարածաշրջանում կայունութիւն եւ խաղաղութիւն հաստատելու ցանկացած հեռանկալ», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Շար.ը էջ 5

Ժորժ Կեպեճեան Ընտրուած է Լիոնի Քաղաքապետ

Յուլիս 17-ին Լիոնի քաղաքապետարանի խորհուրդի արտակարգ նիստին քաղաքապետ ընտրուած է Ֆրանսահայ ժորժ (Գէորգ) Կեպեճեան:

Կեպեճեան Ֆրանսայի կաբլուրու թեմէն երրորդ քաղաքապետը դարձաւ, այդ պաշտօնին փոխարինելով ժերար Քոլոնին: Վերջինս այժմ էմանուէլ Մաքրոնի գլխաւորած կառավարութեան Ներքին գործերոց նախարարն է:

Մինչեւ ընտրուելը ժորժ Կեպեճեան Լիոնի քաղաքապետի առաջին կցորդն էր՝ մշակութային հարցերով: Ան մասնագիտութեամբ վիրաբոյժ է:

«Ֆրիկարօ» օրաթերթը նշած է, որ Կեպեճեան «կանխորոշուած չէր այդ պաշտօնին համար, քանի որ 67 տարեկան է եւ փորձառու քաղաքական գործիչ չէ»: Ըստ օրաթերթին, Կեպեճեանի ընտրութեան հարցին մէջ մեծ դեր ունեցած է նախկին քաղաքապետ ժերար Քոլոն, որ յայտարարած էր, թէ կը նախընտրէր քաղաքապետի պաշտօնին տեսնել իր «հաւատարիմ բարեկամ ժորժ Կեպեճեանը»:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սասնայ Ծռերի Տապալուած Ապստամբութեան Երկուութիւնը

ՀԱՅԿ ԴԱԺԹԵԱՆ

Յուլիսի 17-ը ՊՊԾ գնդի գրաւման օրն է: Այս առիթով Երեւանում երթ էր կազմակերպուել, «Սասնայ ծռերի» համակիրները դուրս են եկել փողոց, ի պաշտպանութիւն ծռերի հնչել են կոչեր:

Մէկ տարի առաջ յուլիսեան այս օրերին հասարակութիւնը անորոշ իրավիճակում էր. չզիտէր՝ գործ ունի հերոսներ, հասարակութեանը, թէ Կապտամբների հետ: Եւ այսօր, ՊՊԾ գնդի գրաւումից մէկ տարի անց, դժուար է ասել՝ այդ իրադարձութեան օրը պէտք է կոչել տարեդարձ, թէ տարելից բառով:

ՊՊԾ գնդի գրաւման շուրջ երկու շաբաթ տեւած օպերացիայի ընթացքում գոհունեցին երեք ոստիկաններ /այսօր նրանց յիշատակին նուիրուած յուշաքար է բացուել/: Սասնայ ծռեր խմբաւորման յանձնուելուց մէկ տարի անց, այժմ, երբ արդէն սկսուել են դատական գործընթացներ, այսպէս էլ պարզ է, թէ իրականում ի՞նչ էր կատարուած Երեւանում 2016 թուականի Յուլիսի 17-ից 31-ը, երբ վերջին Սասնայ ծռերը գնդերը յանձնեց եւ դուրս եկաւ էրեբունու ոստիկանական գնդի տարածքը: Այն օրերին թուում էր, թէ Սասնայ ծռերի ըմբոստ արարքը այն ջրբաժանն է, որից յետոն արդէն պէտք է բեկում լինի հասարակութեան, իշխանութեան եւ երկրի համար: Ինչպէս յաղթահարեցին այս ջրբաժանը պետութիւնը հասարակութիւնը եւ իշխանութիւնը, ինչ հետեւութիւններ արուեցին կամ չարութեան Սասնայ ծռերի արարքից յետոյ, ի վերջոյ կատարուածը ամրապնդեց, թէ թուլացրեց 25-ամեայ պետականութեան, նոր-նոր ինքնակազմակերպուող հասարակութեան եւ իրավիճակի թիւ մէկ պատասխանատու իշխանութեան հիմքեր: Թուում է, թէ այդ հարցի պատաս-

խանը տրուեց այս տարուայ ապրիլին՝ խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ, երբ իշխանութիւնը վերարտադրուեց՝ ստանալով 50 տոկոսից ավելի ձայն: Բայց դա միայն թուում է, որովհետեւ բոլորը հասկանում են, որ մենք խոշոր հաշուով չենք չաղթահարել ՊՊԾ գնդի գրաւման եւ տապալուած ապստամբութեան երկուութիւնը:

Այժմ ընթանում է Սասնայ ծռերի դատավարութիւնը, որը տեղաւորում է հայաստանեան դատական անփառունակ պրակտիկայի տրամաբանութեան մէջ: Ի դէպ, օրերս նախկին գլխաւոր դատախազ Գէորգ Կոստանեանը վերահաստատել էր իր՝ ՊՊԾ գնդի գրաւման օրերին արած յայտարարութիւնը. «Եթէ յանցագործութիւն կատարած անձինք, եթէ Քրէական օրենսգրքի 218-րդ (չէնքեր, շինութիւններ, կապի միջոցներ գրաւելը), 219-րդ (պատանդ վերցնելը) յօդուածներով մեղադրուող անձինք վայր դնեն իրենց գէնքերը եւ յանձնեն շէնքեր, շինութիւնները, պատանդներին բաց թողնեն եւ հրաժարուեն իրենց պահանջներին, ապա ըստ Քրէական օրենսգրքի 218 եւ 219 յօդուածների, վերջիններս ենթակայ չեն քրէական պատասխանատուութեան, եթէ նրանց արարքում այլ յանցակազմի տարրեր չեն պարունակուած: Այսինքն, ինքնին շէնքեր-շինութիւններ ազատելը, պատանդներին բաց թողնելը քրէական օրենսգրքով սահմանուած կարգով խրախուսական նորմի կիրառում չէ»: Կոստանեանը չէր մեկնաբանել, թէ ինչու այսօր այս նորմը չի կիրառուում, սակայն նրա այս յայտարարութիւնը փաստում է, որ Սասնայ ծռերի արարքը բացառապէս քրէական նորմերով չափելի չէ: Այն ավելին է, քան անօրինականութիւնը: Բայց վստահաբար նաեւ իբրեւ քաղաքականութիւն գոնէ այս պահին դեռեւս լիովին ընկալելի ու հասկանալի չէ:

«ՀԱՅԵԼԻ»

Չարեցի փոխարեւ՝ Սեւակ

ԱՐՄԻՆԷ ՕՅԱՆԵԱՆ

Հայկական դրամի 25-ամեակին ընդառաջ, Յունիսի 27-ի նիստում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացրել հաստատել ՀՀ 3-րդ սերնդի թղթադրամներին տեխնիկական բնութագրերն ու պաշտպանական յատկանիշները:

ԿԲ հաղորդագրութեան մէջ նշուած է, որ խորհրդակցելով «Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչներին, մտաւորականների հետ», որոշուել է, թէ ինչպիսին պէտք է լինեն 3-րդ սերնդի նոր թղթադրամները՝ ում պատկերներով: Իհարկէ, պարզ է, թէ ինչու չենց եկեղեցու եւ ոչ մտաւորականներին: Սակայն փաստ է, որ կանգ են առել հետեւեալ տարբերակների վրայ՝ 1 000 դրամ՝ Պարոյր Սեւակ, 2 000 դրամ՝ Տիգրան Պետրոսեան, 5 000 դրամ՝ Ուիլիամ Սարգսեան, 10 000 դրամ՝ Կոմիտաս, 20 000 դրամ՝ Յովհաննէս Այվազովսկի, 50 000 դրամ՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:

Թէ ինչու եւ ովքեր են եղել չենց այս առաջարկների հեղինակները, պարզ է, բայց այդ

որոշումից յետոյ համացանցը հեղեղուեց քննադատութիւններով: Մարդիկ իրաւացիօրէն քննարկում էին թղթադրամների «հերոսների» անցած ուղին, արժանիքները, կապը հայրութեան ու Հայաստանի հետ:

Ոչ մէկին պարզ չեղաւ, թէ ինչու է Չարեցի փոխարինում Սեւակով, Թումանեանը՝ Ուիլիամ Սարգսեանով, Իսահակեանը՝ Կոմիտասով, Սարեանը՝ Այվազովսկիով: Այսօր արդէն չենք էլ յիշում, որ դրամի ներդրման ժամանակ 50, 100, 500 դրամանոց թղթադրամներ կային, որոնց վրայ Արամ Խաչատրեանի, Վիկտոր Համբարձումեանի, Ալեքսանդր Թամանեանի նկարներն էին: Իսկ գուցէ մօտեցողումն է սխալ՝ չէ՞ որ միշտ կարող է հարց ծագել՝ արժէ՞ ուսա ծովանկարչի, ամբերիկեան գրողի, սովետական շախմատիստի լուսանկարը գետեղել դրամի վրայ: Չէ՞ որ աշխարհն այլ աւանդույթներ ունի՝ պատմական գործիչների, թագաւորների ու նախագահների լուսանկարներն է տեղադրում, եւ դա առանձնապէս քննարկումների ու վէճերի տեղիք չի տալիս:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

Սերժ Սարգսեանը Վարչապետ Չլինելու Մասին

ՀԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Սերժ Սարգսեանը նախօրէին Արմենիա հեռուստարկերութեանը տուած հարցազրոյցում պատասխանելով 2018 թուականի վարչապետի վերաբերեալ հարցին, փաստացի կրկնել է նախկինում արուած յայտարարութիւնները: Սերժ Սարգսեանն ասել է, որ երբեք չի պլանաւորել, թէ որտեղ է լինելու յաջորդ պահին: Միեւնոյն ժամանակ նա ասել է, թէ ի՞նչ կարելու է վարչապետի ով լինելը, եթէ խորհրդարանական կառավարման մոդելի պայմաններում այլեւս անձը չէ որոշող, այլ խորհրդարանում իշխող մեծամասնութիւնը:

Սերժ Սարգսեանը գործնականում շօշափում է Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանի կառավարման մոդելի անցման, Սահմանադրութեան փոփոխութեան գործընթացի առակցքը: Այդ փոփոխութիւնը շատերը վերագրեցին նախագահի պաշտօնից յետոյ վարչապետ մնալու Սերժ Սարգսեանի ցանկութեանը: Սակայն, ինչպէս Սերժ Սարգսեանն ինքը բնորոշեց մի քանի ամիս առաջ, քչերն են խորապէս պատկերացնում, թէ ինչպիսի փոփոխութիւն է տեղի ունեցել Հայաստանում:

Հայաստանում այսպէս ասած ընդդիմադիր դիսկուրսի կրողների մեծ մասի շրջանում պատկերացումները եղել են ու կան անձնաւորուած եւ այդ իմաստով ամէն ինչ հանգել է կոնկրետ անձի, որը տուեալ պահին եղել է իշխանութեան գլուխը: Իրականում սակայն Հայաստանի իշխանութիւնը երբեք չի եղել անձի իշխանութիւնը: Իշխանական համակարգը եղել է մի քանի անձերի շուրջ ձեւաւորուած տարբեր խմբերի եւ կլանների հաւաքականութիւն, որոնք կոնկրետ պայմանաւորուածութիւնների են եկել տնտեսական եւ իշխանական, անվտանգային շահերի շուրջ եւ սրբօրէն պահել այդ պայմանաւորուածութիւնները, համակարգի ներքին տրամաբանութեան մէջ առաջնորդուելով բաւական դեմոկրատական մօտեցումներով՝ պատժուել է միայն նա, ով օրէնք է խախտել, պարզապէս ոչ թէ պետական, այլ ներիշխանական օրէնքը: Անձը տուեալ պարագայում եղել է «արբիտր», ինչպէս Ռոբերտ Քոչարեանի մասին էր մի առիթով ասել Գագիկ Մառութեանը:

Այն, որ Սերժ Սարգսեանը կարող է ունենալ վարչապետ դառնալու ներքին ցանկութիւն, կամ ունի այդպիսի ծրագիր, միանգամայն հնարաւոր է եւ հաւանական: Սակայն, բանն այստեղ գուտ անձնական քմահաճոյքը չէ, այլ ներիշխանական յարաբերութիւնների կառուցուածքն ու բովանդակութիւնը, ռիսկերն ու հնարաւորութիւնները: Այդ իմաստով, Սահմանադրութեան փոփոխութեամբ Սարգսեանը

յանն ավելի շուտ ոչ թէ վարչապետ դառնալու հնարաւորութիւն է ապահովել, այլ հակառակը՝ ապահովել է իր համար հնարաւորինս մանրէրելի եւ ձկուն դաշտ վարչապետ չդառնալու դէպքի համար: Այլ կերպ ասած, Սերժ Սարգսեանը ստեղծել է վարչապետ չդառնալու առաւելագոյն յարմարաւէտ միջավայր, որտեղ գործնականում դէ ֆակտօ բազմակենտրոն եւ բազմաշերտ իշխանութիւնը այդպիսին է դատել դէ իւրէ, էպպէս նուազեցնելով ստվերային, ինտրիգային, պալատական բնոյթը, ինտրիտուցիոնալացնելով ներիշխանական անվտանգութեան մեխանիզմները:

Այդ պայմաններում, Սերժ Սարգսեանն իրեն առաւելագոյն յարմարաւէտ կարող է զգալ իշխանութեան դէ իւրէ լծակ չունենալու դէպքում: Դա չի նշանակում, որ նա չի ունենայ այդպիսի լծակ կամ առաւել եւս չի ձգտում ունենալ: Հակառակը, նա գուցէ նոյնիսկ ձգտում է, թեեւ հնարաւոր է մարտավարական ինչ-ինչ նկատառումներով՝ օրինակ առաւելագոյնին ձգտելով նուազագոյնը ստանալու համար:

Բայց տուեալ պարագայում Սերժ Սարգսեանը խօսում է այն մասին, որ կարող է չլինել վարչապետ, որովհետեւ ով էլ լինի, միեւնոյն է առնուազն տեսանելի ապագայում չի կարողանալու լուծել խնդիրներ ավելի, քան ասանք վարչապետ չլինող Սերժ Սարգսեանը: Մնացեալը կը լինի արդէն իշխանութեան ներսում «սողացող դիմակայութեան» հարց, որի համար անգամ 2022 թուականը կը լինի միջնաժամկէտ թիրախ: «ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ
ՉԱՐԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՏՈՒԹԵՐԹ՝
ՍՈՅՐԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնոր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայաստան Պետք է ԵՏՄ-էն Դուրս Գալու Գործընթաց Սկսի. Էդմոն Մարուքեան

Հայաստան Եւրասիական տնտեսական միութեանն դուրս գալու գործընթաց պէտք է սկսի: Այս մասին «NEWS.am»-ի հետ զրոյցի ընթացքին յայտարարած է «ԵԼՔ» դաշինքի պատգամաւոր Էդմոն Մարուքեան, անդրադառնալով ՌԴ Պետտուժմայի վերջին օրէնսդրական փոփոխութեան, ըստ որում Հայաստանի վարորդական իրաւունքը Ռուսիոյ մէջ չի ճանչցուիր:

«Պետտուժմայում ընդունուած օրէնսդրական փոփոխութեան համաձայն՝ միայն Ղազախստանի եւ Պելաուսի վարորդներին է թոյլատրուում Ռուսաստանում աշխատել, այսինքն՝ խտրական վերաբերմունք է ցուցաբերուել Հայաստանի քաղաքացիներին վարորդական իրաւունքի նկատմամբ: Երբ այս մասին յայտնի դարձաւ, ես ահազանգուեցի, որ այդ օրէնքում յստակ ուղերձ կայ առ այն, որ մենք պարտաւոր ենք ռուսերէն ընդունել երկրորդ պաշտօնական լեզու, որպէսզի ընդառաջ գնանք այդ օրէնսդրական փոփոխութեանը: Փաստօրէն, այդ մտահոգութիւնն այսօր հաստատուել է: Արդէն Պետտուժմայի խօսնակ վոյտոյնի կողմից Աժ նախագահի գլխաւորած պատուիրակութեան այցի ժամանակ այդպիսի առաջարկ է արուել: Սա յստակ մտայնում է եւ բացայայտում է՝ ինչու են օրէնքը այդպէս ընդունել, որ ռուսերէնը երկրորդ պաշտօնական լեզու ընդունենք», -

ըսած է պատգամաւորը:

Էդմոն Մարուքեան կ'առաջարկէ կեանքի կոչել Եւրասիական տնտեսական միութեան համաձայնագրի դրոյթները, որ աւելի մեծ ուժ ունի, քան Պետտուժմայի մէջ ընդունուած որոշումները: «Պէտք է ուղղակի կեանքի կոչել Եւրասիական տնտեսական միութեան համաձայնագիրը, որը որպէս միջազգային փաստաթուղթ ունի աւելի բարձր իրաւաբանական ուժ, քան ցանկացած այլ ակտ, որը ընդունուել է Պետտուժմայի կողմից, հիմա եթէ դա չեն կիրառելու Եւրասիական համաձայնագրի այդ կէտը, Հայաստանը պէտք է Եւրասիական միութիւնից դուրս գալու հարց բարձրացնի: Անիմաստ է գտնուել մի միութեան մէջ, որտեղ մեր ձայնը լսելի չէ եւ մեր շահերը հաշուի առնուած չեն, Հայաստանը պէտք է սկսի ԵՏՄ-ից դուրս գալու գործընթաց»:

Պատգամաւորի խօսքով, Ռուսիոյ մէջ ընդունուած այս փոփոխութիւնը կը վկայէ այն մասին, որ ՀՀ իշխանութիւնը թոյլ տուած է, որ Ռուսիա արդէն այս մակարդակով քայլեր կատարէ Հայաստանի ինքնիշխանութեան դէմ. «Սա նշանակում է, որ ՀՀ իշխանութիւնն այնքան է թոյլ է, որ թոյլ է տուել որ Հայաստանի սուվերենութեան դէմ այսպիսի քայլեր կատարել: ՀՀ իշխանութիւնները պիտի գնան ինքնահրկիզման, սա խայտառակ վիճակ է»:

Դպրոցներու ՀՀ-եական Տնօրէնները Հրաժարած են Դանիէլ Իոաննիսեանից Դէմ Հայցերէն



Ընտրակեղծարար կից տնօրէնները հրաժարած են Դանիէլ Իոաննիսեանից դէմ հայցերէն

Աշափնեակ եւ Դաւթաշէն վարչական շրջաններու ընդհանուր իրաւասութեան դատարանին մէջ մեկնարկած է «Իրազեկ քաղաքացիների միաւորման» եւ միաւորման ղեկավար Դանիէլ Իոաննիսեանին դէմ ներկայացուած 30 տնօրէններու հայցի քննութիւնը:

Երեւանի թիւ 64 դպրոցի տնօրէն Երանուհի Յարութիւնեան չէր ներկայացած. Դատարանին մէջ դատաւոր Անի Մխիթարեան յայտարարած է, որ հայցուոր Երանուհի Յարութիւնեան հրաժարած է ներկայացուած դիմումէն:

Իսկ օրեր առաջ Երեւանի թիւ 56 դպրոցի տնօրէն Սուսաննա Գալստեան մամուլին մէջ յայտարարած էր, որ որոշած է ետ վերցնել դիմումը: Դատաւորն յայտարարեց, որ իր վարոյթին մէջ գտնուող միւս տնօրէն հայցուորները նոյնպէս հրա-

ժարած են դիմումներէն: Ըստ փաստաբաններուն, Անի Մխիթարեանին մօտ նոյնաբովանդակ եւս չորս գործ կը քննուի:

Ինք Դանիէլ Իոաննիսեան Ֆէյսպուքի իր էջին գրած է, որ այսօրուայ նիստի տնօրէնները հերթով հայցերէն կը հրաժարին:

Յիշեցնենք, որ խորհրդարանական ընտրութիւններէն առաջ «Իրազեկ քաղաքացիների միաւորում» կազմակերպութիւնը յայտարարած էր, որ հարիւրէ աւելի դպրոցներու եւ մանկապարտէզներու տնօրէններ խոստովանած են, որ ՀՀ-ի համար ընտրողներու ցուցակներ կազմած են՝ զանոնք յանձնելով մարզպետարան, թաղապետարան կամ ընտրական շտաբ: Կազմակերպութիւնը ներկայացուցած էր նաեւ տնօրէններուն հետ զրոյցներու ձայնագրութիւնները:

Երեւանում Տեղի Ունեցաւ Երթ՝ Ի Աջակցութիւն «Սասնայ Ճոերի»



Երեւանի մէջ երթ ի գորակցութիւն Սասնայ Ճոեր« խումբի անդամներուն

Յուլիս 17-ին Երեւանում տեղի ունեցաւ հաւաք եւ երթ՝ ի աջակցութիւն «Սասնայ Ճոերի» անդամներուն: Մէկ տարի առաջ այդ օրը գինուած խմբի անդամները գրաւեցին էրեբունու ոստիկանական գոնդի տարածքը եւ գայն իրենց վերահսկողութեան տակ պահեցին երկու շաբաթ: «Սասնայ Ճոերի» անդամները Յուլիսի 31-ին յանձնուեցուն իրաւապահներին:

Երթին կը մասնակցէին նաեւ ընդդիմադիր քաղաքական գործիչներ:

«Երկիր ծիրանի» կուսակցութեան ղեկավար Զարուհի Փոստանջեան «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին կարծիք յայտնեց, թէ «մէկ տարի առաջ տրուել է մեկնարկ մի գործողութեան, որը պէտք է բերի ազատ եւ ինքնիշխան Հայաստանի, որը այսօր մենք չունենք»:

«Մնացածը արդէն կախուած է մեզից ու մեր հանրութիւնից», - ըսած է Փոստանջեանը:

Արձագանգելով այն դիտարկման, որ փաստօրէն արդիւնաւէտ կը գնահատէ «Սասնայ Ճոերու» գործողութիւնը, Փոստանջեանը

ասաց. - «Այնքանով է արդիւնաւէտ, որ հերոսների կողմից բարձրացուեց հարց, որ այսօր գոյութիւն ունեցող իշխանութիւնը նոյնքան վտանգաւոր է, որքան արտաքին թշնամին, եւ հանրութիւնը դա հասկացաւ: Եւ հարցումները ցոյց տուեցին, որ հանրութիւնը կիսում է այդ գաղափարը, կիսում է եւ գտնում է, որ այո՛, ապստամբութեան միջոցով մենք կարող ենք նաեւ ունենալ յաջողութիւն»:

«Հիմնադիր խորհրդարանի» անդամ Ալեք Ենիգոմշեանի կարծիքով, «Սասնայ Ճոերի» ապստամբական քայլը այն ջրբաժանն էր, որը...Պէտք է ասել, որ եթէ առնուազն երկու տասնամեակ Հայաստանում ընտրական գործընթաց չկայ, եթէ խաղաղ ընդվզման քայլերն էլ բռնի եւ բիրտ միջոցներով ճզմուած են, քաղաքացուն մնում է միայն բռնութեան դէմ բռնութեամբ հանդէս գալ: Այդ ջրբաժանն էր անցեալ տարուայ Յուլիսի 17-ը, եւ այդ ջրբաժանը կայ եւ շարունակուած է»:

ՊՊԾ գնդի գրաւման ժամանակ գոհուեցան երեք ոստիկաններ:

«Պետութիւնը Անձերէ Կախուած Պիտի Չըլլայ». ԼՂ Նախագահի Թեկնածու

Ղարաբաղի մէջ կայանալիք նախագահական ընտրութիւններու նախօրեակին, այդ պաշտօնին համար պայքարող միակ ընդդիմադիր թեկնածուն յայտարարած է, որ արդէն տասը տարի Ղարաբաղի նախագահի պաշտօնը զբաղեցնող Բակո Սահակեանի կրկին առաջադրումը սխալ էր:

Ստեփանակերտի նախկին քաղաքապետ եւ խորհրդարանի մէջ «Շարժում 88» խմբակցութեան ղեկավար Էդուարդ Աղաբեկեան կը պնդէ, որ Սահակեանի առաջադրումը Սահմանադրութեան չի համապատասխաներ:

«Փորձ է արուում անփոխարինելիութեան տարր մտցնել: Իսկ մեր բոլոր յաջողութիւնները պայմանաւորուած էին առաջօր այն ընկալմամբ, որ անփոխարինելի ոչ ոք չկայ», - «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին նշած է Աղաբեկեան: - «Պետութիւնը անձերէ կախուած պիտի չըլլայ», - աւելցուցած է ան:

Այս տարուան սկիզբը կայացած սահմանադրական փոփոխութիւններէն ետք Ղարաբաղ անցում կատարեց կառավարման նախագա-

հական համակարգի: Յառաջիկայ երեք տարիներուն Լեւոնային Ղարաբաղը պէտք է ղեկավարուի անցումային փուլի ռեժիմով: Անցումային նախագահը պիտի ընտրուի խորհրդարանին կողմէ:

Ընդդիմադիր թեկնածու Էդուարդ Աղաբեկեան գիտէ, որ ընտրուելու յոյսեր չունի, պարզապէս պիտի օգտագործէ Ղարաբաղի խնդիրները բարձրաձայնելու համար, անոնց շարքին ինքնորոշման հարցը:

Աղաբեկեան Բակո Սահակեանի առաջադրումը անկախութեան ձգտող Ղարաբաղի մէջ բացասական կը համարէ, շեշտելով, որ անգամ կոմունիստական Զինաստանի մէջ ղեկավարը տասը տարիէն աւելի չի կրնար պաշտօնավարել:

Թեկնածուն նշած է, որ չի կրնար ըսել, թէ սահմանադրութիւնը փոխուեցաւ յատուկ Սահակեանի իշխանութիւնը երկարաձգելու համար, բայց մինչեւ այժմ ոչ մէկուն պարզ է, թէ ինչու իշխանութիւնները գացին այդ քայլին»:

ԼՈՒՐԵՐ

Կարո Փայլան

«Ցեղասպանութիւնը Պէտք է Քննարկուի Նոյն Ինք Թուրքիոյ Խորհրդարանին Մէջ»

Հայոց Ցեղասպանութիւնը պէտք է քննարկուի ոչ թէ օտար երկիրներու խորհրդարաններուն մէջ, այլ նոյն ինք Թուրքիոյ Մեծ Ժողովին մէջ: Այս մասին Պոլսոյ մէջ լոյս տեսնող «Ակօս» թերթին յայտնած է Թուրքիոյ ընդդիմադիր ժողովրդագէտ Կարո Փայլանը:



Թուրքիոյ Խորհրդարանի հայ պատգամաւոր Կարո Փայլան

«Այդ յանցանքները տեղի ունեցած են Թուրքիոյ մէջ եւ պէտք է քննարկուին Մեծ լիսին մէջ... Մեր ցաւերն այսօր Մեծ լիսին մէջ չեն քննարկուիր, այդ իսկ պատճառով կը դառնան այլ երկիրներու խորհրդարաններու քննարկման առարկան, եւ եթէ այս առաջարկն ալ ընդունուի, այս այսպէս ալ պիտի շարունակուի», - հաստատած է ան:

«Այն յանցանքները, որոնք տեղի ունեցած են Թուրքիոյ մէջ, անոնց մասին պէտք է խօսուի եւ պէտք է խօսուի նոյն ինք խորհրդարանին մէջ: Քանի որ անոնց մասին, մեր ցաւերուն մասին չեն խօսիր, չեն քննարկեր Թուրքիոյ Մեծ Ժողովին մէջ, այդ քննարկման առարկայ կը դառնայ այլ երկիրներու խորհրդարաններուն մէջ», - յայտարարած է Փայլան եւ աւելցուցած, որ եթէ Թուրքիոյ խորհրդարանին մէջ «ցեղասպանութիւն» «Քիւրտիստան» եզրերն օգտագործելու համար դրամական տուգանքներ կիրառելու վերաբերեալ առաջարկուող փոփոխութիւնն ընդունուի, ուրեմն Հայոց Ցեղասպանութեան թեման պիտի շարունակուի քննարկման առարկայ ըլլալ այլ պետութիւններու խորհրդարաններուն մէջ:

Փայլան ընդգծած է, որ իրենց կուսակցութիւնը պիտի պայքարի այդ առաջարկին դէմ: Անոր դէմ է

նաեւ խորհրդարանի միւս ընդդիմադիր ուժը՝ Ժողովրդահանրապետականները:

Թուրքիոյ խորհրդարանին մէջ «ցեղասպանութիւն», «Քիւրտիստան» եզրերն օգտագործելու համար դրամական տուգանքներ կիրառելու վերաբերեալ առաջարկուող փոփոխութեան նպատակն է կտրել ընդդիմութեան ձայնը եւ ապահովել նախագահական պալատին եկած հրահանգներու առաւելագոյն արագ օրինականացումը, յայտնած է Կարո Փայլան:

«Այս փոփոխութիւնն ալ աւելի անկարեւոր պիտի դարձնէ Թուրքիոյ Ազգային մեծ ժողովը: Մեծ լիսը պիտի վերածուի Պալատի նոտարի», - յայտարարած է Փայլան:

Նշենք, որ Թուրքիոյ խորհրդարանի կանոնակարգին մէջ անակնկալ դրոյթներ յայտնուած են. մասնաւորապէս, պատգամաւորներն այսուհետեւ կրնան տուգանուիլ Հայոց Ցեղասպանութեան մասին խօսելու համար:

Ըստ այդմ, նշուած է, որ իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան եւ դաշնային «Ազգային Շարժում» կուսակցութեան կողմէ պատրաստուած է երկրի խորհրդարանին մէջ պատգամաւորներու վարքի, նիստերու կանոնակարգի ու արտաքին տեսքի հետ կապուած փոփոխութիւններու փաթեթ:

Ատրպէյճանցի Դատախազը Խնդրած է Ալեքսանդր Լափշինը 6,5 Տարուայ Ազատազրկման Դատապարտել

Պաքուի ծանր յանցագործութիւններու դատարանին մէջ Ուրբաթ շարունակուած է Ատրպէյճանի մէջ կալանքի տակ գտնուող ինթերնետի լրագրող Ալեքսանդր Լափշինի գործով դատաւարութիւնը, կը գրէ «Թրենտ» գործակալութիւնը:

Դատաւոր Ալովսաթ Ապասովի նախագահութեամբ դատական նիստին դատախազը խնդրած է Լափշինի նկատմամբ սահմանել պատիժ՝ 6,5 տարուայ ազատազրկման տեսքով: Դատարանի հերթական նիստը պիտի կայանայ 19 Յուլիսին:

Ալեքի վաղ հաղորդուած էր, որ աւարտած է լրագրողի գործով դատաքննութիւնը: Դատախազը խնդրած էր դատարանին իրեն ժամանակ տրամադրել մեղադրական ճառի պատրաստման համար:

Յիշեցնենք, որ Ռուսիոյ, Իսրայէլի եւ Ուքրանիոյ քաղաքացի հանդիսացող Ալեքսանդր Լափշին

ձերբակալուած է Մինսկի մէջ 2016 թուականի Դեկտեմբերի 15-ին՝ Ատրպէյճանի դիմումին համաձայն, եւ արտաքանձնուած Պաքու 2017 թուականի Փետրուարի 7-ին:

Լափշինին կը սպառնայ 8 տարուայ ազատազրկում 2011 թուականի Ապրիլին, 2012 թուականի Հոկտեմբերին եւ 2016 թուականի Յունիսին Արցախ այցելելու, ինչպէս նաեւ Ատրպէյճանի քաղաքականութիւնը քննադատելուն համար:

ՀՀ Արտաքին գործոց նախարարութեան մամլոյ խօսնակ Տիգրան Բալայեան, անդրադառնալով Լափշին արտաքանձնման, յայտարարած էր, որ Ալեքսանդր Լափշինի հետապնդումը, Ատրպէյճան արտաքանձնումը խօսքի ազատութեան եւ ազատ տեղաշարժի, մարդու հիմնարար իրաւունքներու կոպտագոյն ոտնահարում է, որ կրկին անգամ ի ցոյց կը դնէ բռնապետութեան եւ ժողովրդավարութեան միջեւ առկայ խոր անդունդը:

Մոսկուա Կը Փորձէ Կազմակերպել Սարգսեան-Ալիեւ Հանդիպում

Ռուսական «Իզուեսթիա» թերթը հանդէս եկած է հրապարակմամբ, ուր նշած է, թէ Մոսկուա կը փորձէ յառաջիկային կազմակերպել Սարգսեան-Ալիեւ հանդիպում: Ըստ թերթին, Երեւան համաձայն է, Պաքու նոյնպէս չի մերժեր նման հանդիպման իրականացման ֆրեմլինի առաջարկը, միաժամանակ նախապայման առաջադրելով՝ բանակցութիւնները պիտի կայանան, «եթէ յստակօրէն ձեւակերպուի անոնց օրակարգը»:

Պաշտօնական Պաքուն յայտարարած է, թէ չ'ընդունիր Ղաւաթաղի մէջ կայանալիք նախագահական ընտրութիւնները: «Անոնք կը խախտեն Ատրպէյճանի Սահմանադրութիւնն ու հարուած կը հասցնեն խնդիրի կարգաւորման շուրջ ընթացող բանակցու-

թիւններուն», - յայտարարած է Ատրպէյճանի արտաքին գերատեսչութիւնը:

Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարար Էլմար Մամետարով ալ «Ռիա նովոսթիին» հետ գրոյցի ընթացքին պնդած է, որ միջազգային հանրութիւնը պէտք է ճնշում գործադրէ Երեւանի վրայ: «Կոչերը, թէ այս հակամարտութիւնը չունի ռազմական լուծում, եւ կողմերը պէտք է քաղաքական կամք ցուցաբերեն, պէտք է ուղեկցուին յստակ պահանջով՝ դուրս բերել գործերն Ատրպէյճանի գրաւեալ տարածքներէն: Այս հարցին մէջ պէտք է քաղաքական դիւանագիտական ճնշում գործադրել Հայաստանին վրայ՝ խաղաղութիւն պարտադրելու համար», - ըսած է Մամետարով:

Հայաստանին Առաջարկուած Է Ռուսերէնը Դարձնել Պաշտօնական Լեզու

ՌԴ պետտուժայի խօսնակ Վլադեսլաւ Վոլոտին առաջարկած է Հայաստանի իշխանութիւններուն երկրին մէջ օրէնսդրօրէն պաշտօնական կարգավիճակ տրամադրել ռուսերէն լեզուին, որպէսզի Ռուսիոյ տարածքին հնարաւոր ըլլայ ճանչնալ հայկական վարորդական իրաւունքները, կը յայտնէ «ԹԱՍՍ» լրատուական գործակալութիւնը:

«Ես կրնամ միայն մէկ բան ըսել, ամբողջեց'ք այն (ռուսերէնը) որպէս պաշտօնական լեզու, եւ այդ ժամանակ օրէնքն ինքնաբերաբար կ'ընդգրկէ նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը», - ըսած է Վոլոտին Հայաստանի Հանրապետութեան ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյեանին հետ հանդիպման ժամանակ, որուն ընթացքին բարձրացուած է Ռուսիոյ մէջ ազգային վարորդական իրաւունքներով աշխատելու արգելքի մասին հարցը:

Ռուսիոյ տարածքին ազգային վարորդական իրաւունքներու ճանաչման հարցը բարձրացուցած է Բաբլոյեան, նշելով, որ Հայաստան փաստացիօրէն դուրս մնացած է Պետտուժայի կողմէ օրէնքի ընդունումէն ետք, որուն համաձայն խրախրուողները, ինչպէս նաեւ շարք մը երկիրներու քաղաքացիներուն, ուր ռուսերէնն ամբողջութեամբ կը օրակարգուի, որպէս պաշտօնական լեզու, տրամադրուած է Ռուսիոյ մէջ ազգային իրաւունքներով վարորդ աշխատե-



ՌԴ պետտուժայի խօսնակ Վլադեսլաւ Վոլոտի

լու իրաւունք: Ալեքի վաղ հաղորդուած է, որ ԱՊՀ երեք երկրի քաղաքացիներուն թոյլ տրուած է Ռուսիոյ մէջ աշխատել ազգային վարորդական իրաւունքներով: ՌԴ պետտուժայի կողմէ ընդունուած համապատասխան փոփոխութիւններուն համաձայն, փոխադրումներու ոլորտին մէջ աշխատող օտարերկրացիներու կողմէ ռուսական վարորդական իրաւունքներ ստանալու պահանջը պիտի չտարածուի խրախրուողներին, ինչպէս նաեւ Պեւոստիոյ եւ Ղազախիստանի վրայ, ուր ռուսերէնը պաշտօնական լեզու է:

Սեւան Նշանեան Փախուստ Տուած Է

Շարունակուած էր 1-էն

Նիշանեան հրաժարած էր ըսել, թէ ուր կը գտնուի Թուրքիոյ մէջ, թէ անոր տարածքէն դուրս:

Ան նշած է, որ 48 ժամ սպասելու կարիք չկայ: «Այս պահէն սկսեալ զիս կրնան ընդունիլ որպէս փախուստի մէջ գտնուող անձ», - յայտնած է լեզուաբանը:

Սեւան Նիշանեան Թուրքիոյ մէջ ձերբակալուած է այն բանին համար, որ Իզմիրի Սիւրիւնէ գիւղի իր սեփական այգիին մէջ «ապօրինի» շինարարութիւն կատարած է:

Թրքական մամուլն ալեքի վաղ յայտնած էր, որ Սեւան Նիշանեանի ձերբակալութիւնը իշխանութիւններու սարքած գործն է, քանի որ մտաւորականը բազմիցս հանդէս եկած էր թրքական կառավարութեան բացերու հրապարակային քննադատութեամբ: Շատեր հանդէս եկած են զինք ազատ արձակելու կոչով՝ նշելով, որ Սեւան Նիշանեանը պատժելու իրական պատճառն այն է, որ ան համարձակած է քննադատել Թուրքիոյ պաշտօնական պատմութիւնը՝ հրատարակելով «Սիւալ Հանրապետութիւն» գիրքը:

ՄԱՍԻՍ
 ԱՄԵՆԱԿԱՏԱԳԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Անգարա 2,5 Միլիառ Տոլար Պիտի Վճարէ Ռուսական C-400 Համակարգերու Համար

«Bloomberg» գործակալութիւնն ընդգծած է, որ Թուրքիոյ համար սկզբունքային է ոչ միայն բուն սպառազինութիւնը, այլև ձեռք բերուելիք տեխնոլոգիաները, բան մը, որ ապագային ինքնուրոյն կերպով նման համակարգ արտադրելու հնարաւորութիւնն պիտի տայ այդ երկրին:



Թուրքիա համաձայնած է 2,5 միլիառ ԱՄՆ տոլար վճարել ռուսական հակաօդային պաշտպանութեան C-400 համակարգեր ձեռք բերելու համար: Յղում կատարելով թրքական «բարձրաստիճան աղբիւր»ին, այս մասին գրած է «Bloomberg» գործակալութիւնը: Գործարքով նախատեսուած է Անգարային երկու C-400 համակարգերու տրամադրում, եւս երկուքի արտադրութեան կազմակերպում Թուրքիոյ մէջ: Այսինքն, խօսքը ոչ միայն այդ համակարգերը, այլև անոնց պատրաստման տեխնոլոգիան ձեռք բերելու մասին է:

Ռուս փորձագէտ Կոնստանթին Մաքիենքօ «Ռոսիյաքայա կազէթա»ին յայտնած է, թէ այս գործարքով Թուրքիա ցոյց կու տայ իր հիասթափութիւնը ՆԱՌՕ-էն եւ Միացեալ Նահանգներէն: «Սակայն քանի դեռ վաճառքի պայմանագիրը չէ ստորագրուած, այդ մասին խօսիլը դեռ շուտ է», - նշած է փորձագէտը:

Խնդիրն այն է, որ հակահրթիռային պաշտպանութեան ռուսական համակարգերը համատեղելի չեն ՆԱՌՕ-ի ուժերուն մէջ օգտագործուող համակարգերուն հետ: Ըստ այդմ, անոնց վրայ չեն կրնար տարածուիլ այն սահմանափակումները, որոնք Թուրքիոյ մէջ կը կիրառէ Հիւսիս-ատլանթեան դաշինքը: Օրինակ՝ ռուսական համակարգերը կրնան տեղադրուիլ ե՛լ Հայաստանի հետ սահմանին, ե՛լ Հեյլեան ծովի ափին՝ Յունաստանի հետ սահմանին, մինչդեռ ՆԱՌՕ-ի

համակարգերու տեղադրման պարագային որոշակի սահմանափակումներ կը գործեն: «Ռուսիոյ հետ համաձայնագիրը թոյլ կու տայ մեզի հակահրթիռային եւ հակաօդային պաշտպանութեան այդ համակարգերը տեղադրել այնտեղ, ուր մենք կը ցանկանք», - «Bloomberg»ին յայտնած է թուրք պաշտօնեան:

Գործակալութիւնն ընդգծած է, որ Թուրքիոյ համար սկզբունքային է ոչ միայն բուն սպառազինութիւնը, այլև ձեռք բերուելիք տեխնոլոգիաները, բան մը, որ ապագային ինքնուրոյն կերպով նման համակարգ արտադրելու հնարաւորութիւնն պիտի տայ այդ երկրին: Ռուս փորձագէտը, մինչդեռ, այդ առնչութեամբ նկատել տուած է, որ Թուրքիա պէտք է միլիառներ ծախսէ՝ ռուսական համակարգերն ինքնուրոյն արտադրելու համար «Անոր համար հարկ է ստեղծել լիովին նոր ոլորտ»:

«Bloomberg» յիշել տուած է նաեւ, որ աւելի վաղ Թուրքիա կը ցանկար հակահրթիռային պաշտպանութեան համակարգ գնել Չինաստանէն, սակայն «ամերիկացիներու ճնշման տակ» հրաժարած է գործարքէն: Ռուս մասնագէտներու գնահատմամբ, C-400-ը այսպիսի համակարգ է, որ կը վերահսկէ բոլոր յայտնի հրթիռներու թռիչքը մինչեւ 800 քմ շառուիղով, եւ կրնայ միաժամանակ թիրախաւորել շուրջ 80 թռչող մարմին: Մինչեւ օրս Ռուսիա C-400 համակարգ վաճառած է միայն Չինաստանին:

Յարաբերութիւններու Ամենացաւոտ Կողմը

Շարունակուած էջ 1-էն

բերնով, ԱԳ նախարարի բերնով, եւ ոչ թէ քաղաքագէտներու կամ նոյնիսկ որեւէ պաշտօնեայի միջոցով:

Ինչ կը վերաբերի Ռուսիոյ հետ համագործակցութիւնը դադրեցնելու կամ նուազեցնելու վերաբերեալ դիտարկումներուն, նախագահը նշած է, որ «դրանք ծայրայեղ վտանգաւոր խօսքեր են, դրանք ծայրայեղ բարդ իրավիճակ կարող են ստեղծել»:

«Երբ ասում էք՝ վերանայինք, իսկ ո՞ւմ հետ էք ուզում, որպէսզի

վերանայինք, բարեյալենք. Թուրքիայի հետ, թէ ՆԱՌՕ-ում բոլորն էսպէս գրկաբաց կանգնած սպասում են, որ Հայաստանը հիմա գայ այնտեղ: Թէ՞ ուղղակի բոլորի հետ մենք էսպէս թշնամանում ենք, կամ բոլորին ասում ենք՝ դուք Արպէյ-ճանին օգնում էք, եւ մենք մենակ ելնում ենք ամբողջ աշխարհի դէմ», - աւելցուցած է նախագահը:

Նախագահը շեշտած է, որ Հայաստան կը վարէ համաչափ արտաքին քաղաքականութիւն՝ ունենալով մերձաւոր դաշնակիցներ ու նաեւ համագործակցելով գործընկերներու հետ:

ՄԴՀԿ Անընդունելի Կը Նկատ

Շարունակուած էջ 1-էն

«Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնն իր խոր անհանգստութիւնն է յայտնում վերջին օրերին Ատրպէյճանի սանձագերծած սաղրիչ գործողութիւնները վերաբերեալ միջազգային հան-

րութեան, մասնաւորապէս, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պաշտօնական ներկայացուցիչներին հէտք յայտարարութիւններին հետ կապուած:

«Միջնորդ պետութիւնների անհասցէ, առանց կոնկրետ գործողութիւնների կեցուածքն ազատում

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Ապօրէն Կերպով Կառուցուած 700 Շէնքերու Քանդում Եզիպտոսի մէջ

Եզիպտոսի մէջ պետական հողատարածքներու վրայ բնակարաններու եւ առեւտրական շէնքերու կառուցումն ընդհանրական երեւոյթ դարձած ըլլալով՝ պետութիւնն սկսած է դիմել խիստ պատժամիջոցներու: Այս կապակցութեամբ առաջին հերթին Գահիրէի մերձակայքը գտնուող Ալ Ուարաք կղզիին վրայ կառուցուած 700 ապօրէն շինութեանց քանդումի գործողութիւնն սկսաւ: Որպէս հակազդեցութիւն շրջանի բնակիչներն սկսան բողոքի ցոյցերու դիմել: Ոստիկանութեան հետ եղած բախումներու ընթացքին գոհ գացած է անձ մը եւ վիրաւորուած տասնեակ մը ուրիշներ: Ներքին գործոց նախարարութեան հաղորդագրութեան համաձայն 31 ոստիկաններ վիրաւորուած են բախումներու ընթացքին: Ապօրէն շինութեանց դէմ եղած արշաւին համաձայն գտնուած է նաեւ Եզիպտոսի նախագահ Ապտէլ Ֆաթիմա էլ Սիսին:

Լիպիացի Գաղթականներ Կը Վտարուին Թունուզէն

Անսպասելիօրէն խումբ մը զինուորներ մուտք գործելով Թունուզի Չուչա Քէմփը, զայն աւերեցին ու բնակիչներն ալ պարտադրուեցան ակամայ լքել իրենց բնակավայրը: Նշենք նաեւ որ այս քէմփը փակուած յայտարարուած էր ՄԱԿի կողմէ: Սակայն բնակիչները, որոնք մեծ մասամբ Լիպիայէն եկած էին, մերժած էին տեղահան ըլլալ: Անոնց մէջ կը գտնուէին նաեւ Նիկերէն եւ Փղոսկրեայ Ափէն ապաստան գտած գաղթականներ:

Արդարեւ վեց տարիներէ ի վեր մոռացութեան ենթարկուած այս մարդիկը՝ անակնկալի գալով, չեն գիտեր թէ ինչպիսի ճակագիր մը կը սպասէ իրենց:

Յորդանանցի մը Յկեանս Բանտարկուած Երեք Ամերիկացիներ Սպաննելու Համար

Յորդանանի զինուորական դատարանը 39 ամեայ զինուոր մը ցկեանս բանտարկութեան դատապարտեց, ամերիկեան բանակի երեք մարդիչներ սպաննած ըլլալու մեղադրանքով:

Արդարեւ ամբաստանեալ Մաքրէ ալ Թաուայֆա ԱՄՆի երեք զինուորներ սպաննեց այն պահուն երբ անոնք մուտք պիտի գործէին Հարաւային Յորդանանի King Faisal ռազմակայանը:

Մեղադրեալը կ'ամբաստանուի նաեւ զինուորական եւ այլ օրէնքները խախտած ըլլալու յանցանքով:

Ծոցի Երկիրներու Եւ Քաթարի Միջեւ Տագնապ Կը Շարունակուի

Ծոցի երկիրներու եւ Քաթարի միջեւ եղած շրջափառումը մեծապէս վնասած է Քաթարի առեւտրա-տնտեսական համակարգը: Արդարեւ Եզիպտոս, Սէուտական Արաբիա, Պահարէն եւ Արաբական Միացեալ Էմիրէթներ խզած են իրենց օդային եւ ցամաքային յարաբերութիւնները Քաթարի հետ: Այս կեցուածքը իր ժխտական անդրադարձն ունեցաւ նաեւ առաւելաբար օդանաւային փոխադրութեանց վրայ: Միւս կողմէ Թուրքիա պատրաստակամութիւն յայտնած է կենսական օժանդակութիւններ հայթայթելու Քաթարին:

Համեմատաբար Խաղաղ Վիճակ Սուրիոյ մէջ

Աշխրհի տնտեսապէս 20 հզօրագոյն երկիրներու գագաթի ժողովի ծիրէն ներս տեղի ունեցած Փութին-Թրամփ խօսակցութեանց իբրեւ հետեւանք ներկայիս Սուրիոյ ընդհանուր տարածքին եւ մասնաւորաբար զգայուն շրջաններուն մէջ կը տիրէ համեմատաբար խաղաղ կարգավիճակ: Ընդդիմադիրներն այս հարցի կապակցութեամբ ցոյց տուած են որոշ հասկացողութիւն եւ դրական կեցուածք: Հետաքրքրականն այն է որ ընդդիմադիր ղեկավարները նոր քաղաքականութիւն մը որդեգրելով անմիջապէս չեն պահանջեր Սուրիոյ նախագահ Ասատի եւ իր կառավարութեան մեկնումը:

Եմէն 20 Թոն Մարդասիրական Օգնութիւն Կը Ստանայ Ռուսիայէն

Ռուսաստանի Դաշնութեան Շտապ Օգնութեանց նախարարութիւնը որոշած է աւելի քան 20 թոն մարդասիրական օժանդակութիւն հայթայթել Եմէնի: Յատուկ սաւառնակով կատարուելիք օգնութեան մէջ ներառուած են սննդամթերք, դեղորայք, վրաններ եւ այլ անհրաժեշտ սարքեր: Անոնք պիտի տրամադրուին այն քաղաքացիներուն, որոնք առաւելաբար տուժած են երկրի քաղաքացիական կռիւներու ընթացքին:

է պաշտօնական Պաքուի ձեռքերն ու հնարաւորութիւն տալիս Արցախի Հանրապետութեան եւ Ատրպէյճանի շփման գծի ողջ երկայնքով իրականացնել իրավիճակն ապակայունացնող ռազմական գործողութիւններ, որի հետեւանքով գրեթէ անհնարին է դառնում այս երկրի հետ ցանկացած բանակցութիւն: «Նմանատիպ ահաբեկչական

գործողութիւնները չլի են ամենաանկանխատեսելի հետեւանքներով, որի անմիջական պատասխանատուութիւնը կրում է ոչ միայն պաշտօնական Պաքուն, այլ նաեւ միջնորդ երկրները՝ խնդրին ուղիղ եւ հասցեական չմիջամտելու եւ ալիւեան ռեժիմին չզսպելու համար», ըսուած է Հնչակեան կուսակցութեան յայտարարութեան մէջ:

Ատրպեյճանի Պաշտպանութեան Նախարարի Պնդմամբ՝ Ապրիլեան Պատերազմին «Յաջողութեան Դասած Էն» Ռուսական Ձեռքի Շնորհիւ

Ատրպեյճանին շուրջ 5 միլիոն տղարի ռուսական սպառազինութիւն մատակարարելու պայմանագիրն արդէն իրականացուած է 90 տոկոսով: Այդ մասին ռուսաստանեան «Նովոսթի» լրատուական գործակալութեան յայտնած է Ատրպեյճանի Պաշտպանութեան նախարար Զաքիր Հասանով, ընդգծելով, թէ «նաեւ այդ գինամթերքի շնորհիւ է, որ Ատրպեյճան յաջողութեան հասած է անցեալ տարուայ պարիլեան պատերազմին»:



Տարիներ առաջ կողմերը գէնք-գինամթերքի մատակարարման ոլորտին մէջ խոշորածաւալ պայմանագիր կնքած էին, որով Մոսկուա պարտաւորուած էր Ատրպեյճանն ուղարկել «-90 տիպի 100 թանկ, 100 BMP-3 զրահամեքենայ, «Սմերչ» համագործակցի կրակի հակազդեցիք համակարգեր ու «Մսթա-Ս» կայանքներ: «Ժամանակակից այդ գէնքերը շատոնց Ատրպեյճան բերուած են եւ բարեյաջող կը կիրառուին», - նշած է Հասանով, Պաշտպանութեան նախարարի պաշտօնին 4 տարիներու ընթացքին առաջին անգամ ըլլալով հարցազրոյց տալով օտարերկրեայ լրատուամիջոցին՝ ռուսական գործակալութեան:

Ծաւալուն գրոյցի ընթացքին ազերի նախարարը պնդած է նաեւ, թէ Պաքու հակահրթիռային գէնք ունի, որ «կրնայ կործանել Հայաստանի մէջ տեղակայուած ռուսական «Իսկանդեր»ը»: «Ես՝ որպէս Պաշտպանութեան նախարար, կը յայտարարեմ, որ մենք ունինք հակազդեցութեան համակարգ, մենք կրնանք կործանել այդ հրթիռները: Մենք նոյնպէս ունինք հրթիռներ՝ 50 անգամ աւելի շատ: Ես ամբողջական պատասխանատուութիւն կը կրեմ իմ ըսած խօսքերուս համար», - յայտարարած է Ատրպեյճանի Պաշտպանական գերատեսչութեան ղեկավարը, աւելցնելով, որ այդ հրթիռներն Ատրպեյճան ձեռք բերած է ոչ Ռուսիոյ մէջ, որակով, սակայն, անոնք ռուսականն են վատ չեն:

Հասանով նշած է, որ Պաքու հետաքրքրուած է եւ կ'ուզէ Ռուս-

իայն գէնքերու նոր խմբաքանակ ձեռք բերել, սակայն հրաժարած է մանրամասնել, թէ ինչպիսի եւ որքան: Անոր փոխարէն հաստատած է, որ շփման գիծին վրայ իրավիճակը երթալով կը լարուի, բանակցութիւններն արդիւնք չեն տար, բան մը, որ անընդունելի է Ատրպեյճանի համար:

«Վերջին տարիներուն ռազմական գործողութիւններու գօտիին վրայ իրավիճակը երթալով կը սրուի, պատճառը մէկն է՝ ատրպեյճանական հողերու զբաւումը, քանի դեռ երկու հակառակորդ բանակներ կանգնած են իրար դիմաց, թէժացումն անխուսափելի է», - յայտնած է Զաքիր Հասանով:

«Կը կարծէք, որ դարաբաղեան խնդիրը պիտի լուծուի ռազմակա՞ն ճանապարհով», - ռուս լրագրողի հարցին ի պատասխան ըսած է Ատրպեյճանի Պաշտպանութեան նախարարը. - «Ես քաղաքական գործիչ չեմ, իմ երկիրս հաւատարիմ է խնդրի խաղաղ կարգաւորման, սակայն այդ չի նշանակեր, որ բանակցութիւնները պէտք է անվերջ ըլլան, իսկ անոնք արդէն շատ ձգձգուած են: Բանակցութիւնները յանուն բանակցութիւններու ոեւէ մէկուն պէտք չեն, բացի անկէ, նայեցէ՛ք ձեր շուրջը՝ միջազգային օրէնքներն արդէն չեն աշխատիր, բոլորը իրենց յոյսը կը դնեն ուժի վրայ, եւ, բնականաբար, մենք պէտք է արձագանգենք անոր»:

Ֆրանսայի Դեսպան. Նոր Համաձայնագրի Ստորագրման Պարագային Կը Բարելաւուի Հայաստան-Եւրոմիութիւն Գործարար Մթնոլորտը



Հայաստան-Եւրոմիութիւն նախաստորագրուած նոր համաձայնագրի ստորագրման պարագային Հայաստանի համար պիտի բացուին նոր հնարաւորութիւններ: «Արմէնբրէյս»-ի հաղորդմամբ, 13 Յուլիսին լրագրողներու հետ հանդիպման ժամանակ այս մասին յայտնեց Հայաստանի մօտ Ֆրանսայի արտակարգ եւ լիազօր դեսպան Ժան-Ֆրանսուա Շարփանթիէ:

Թիւններու մատուցման, բան մը, որ առեւտրական առումով խիստ կարեւոր է: Կան նաեւ բազմաթիւ տնտեսական պայմանագրային դրոյթներ, որոնք կը միտին աւելի բարելաւել գործարար մթնոլորտը ԵՄ եւ Հայաստանի միջեւ», - յայտնեց Շարփանթիէ:

«Համաձայնագրի կենսագործումը կը ներառնէ տնտեսական համագործակցութեան շարք մը ուղիներ՝ գիւղատնտեսութիւն, երթեւեկութիւն, առողջապահութիւն եւ այլն: Նախաստորագրուած պայմանագրին մէջ կան նաեւ դրոյթներ, որոնք կը վերաբերին ծառայու-

21 Մարտին նախաստորագրուած է ՀՀ-ԵՄ նոր համաձայնագիրը: ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեան վստահութիւն յայտնած է, որ փաստաթուղթը նոր էջ պիտի բանայ Միութեան ու անոր անդամ երկիրներուն հետ յարաբերութիւններուն մէջ:

10 Յուլիսին Էդուարդ Նալբանդեան Քիշնեւի մէջ Արեւելեան գործընկեր

Շուէտացի Պատգամաւորները Էրտողանին Սեղադրած են Ցեղասպանութիւն Կատարելու Սէջ

Շուէտացի օրէնսդիրները բողոք ներկայացուցած են ընդդէմ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի՝ մեղադրելով գինք ցեղասպանութեան, մարդկութեան դէմ յանցանքներու եւ պատերազմական յանցագործութիւններու մէջ: Այս մասին կը յայտնէ «Independent»:

Շուէտի խորհրդարանի հինգ անդամներ երկրի դատախազութեան հայց ներկայացուցած են ընդդէմ Էրտողանին, մատնանշելով անոր ունեցած դերակատարութիւնը 2015 թուականէն մինչեւ օրս թրքական ուժերու եւ քիւրտ գինեակներու միջեւ արիւնալի հակամարտութեան գործին մէջ:

Այս Շուէտի մէջ առաջին դէպքն է, երբ փորձ կը կատարուի պատասխանատուութեան ենթարկել այլ երկրի ղեկավարը: Բողոքին մէջ ներառուած են նաեւ վարչապետ Պինալի Երտողանին եւ շարք մը

նախարարներու անուններ: Եթէ դատախազութիւնը ներկայացուած բողոքի հիման վրայ որոշում կայացնէ դատական գործ յարուցել, ուրեմն Էրտողանը ձերբակալելու հրաման պիտի ստուի:

2014 թուականէն Շուէտի մէջ կը գործէ օրէնք, որ թոյլ կու տայ երկրի դատարաններուն որեւէ դատական գործ յարուցել մարդկութեան դէմ յանցագործութիւն գործելու համար՝ անկախ անկէ, թէ այն ուր տեղի ունեցած է:

Կանաչներու կուսակցութեան անդամ Քարլ Շլիթըրը յոյս յայտնած է, որ եւրոպական երկիրները նոյնպէս կը մտածեն նմանօրինակ քայլի դիմելու մասին: «Եթէ Էրտողանին կը խանգարեն շրջիլ Եւրոպայի մէջ եւ ազդել եւրոպական երկիրներուն վրայ այնպէս, ինչպէս կը ցանկայ, ուրեմն յոյսով եմ, որ այդ մէկը կ'ազդէ անոր քաղաքականութեան վրայ», - նշած է նա:

Arabic Night
Սրաքսկան Երեկոյ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԵՆՏԷՅԼԻ Ա.Դ.Հ.Կ.
ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ

Երեկոն կը խանդաւարէ՝
D.J. Alex • Darbuka Specialist Mark Elkhoury

ՀԱԾԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ

ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 29, 2017
Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
Raffi's Banquet Hall սրահին մէջ
3887 E. Sierra Madre Blvd., Pasadena, CA 91107

Մուտքի ցուր՝ \$50
Տոմսեր պահովելու համար հետաձայնել
Կարօ (818) 913-4024 • Ալիօ (818) 913-9311

Պէյրուք. «Տիւրուճի» Ուսանողական Միութեան Ազգային-Յեղափոխական Երգերու Փառատօնը Նուիրուած ՍԴՅԿ-ի 130 Ամեակին



Կազմակերպութեամբ Սոցիալ Դոմոկրատ Հնչակեան Կուսակցութեան «Տիւրուճի» Ուսանողական Երիտասարդական Միութեան, Ուրբաթ 14 Յունիսի երեկոյեան Նոր Հաճնոյ մայր պողոտային վրայ տեղի ունեցաւ ազգային-յեղափոխական երգերու ժողովրդային փառատօն, նուիրուած Հնչակեան Կու-

քը նուիրած է ազգին ու հայրենիքին», ըսաւ Միհրանեան աւելցնելով, որ ազգային-յեղափոխական երգերը պարզապէս բանաստեղծութիւններ չեն, այլ յիշողութիւնը վառ պահող, սերունդներ դաստիարակող արտայայտութիւններ են: Երգի այս փառատօնին մենք եկած ենք համայն հայութեան հաս-



սակցութեան Հիմնադրութեան 130-ամեակին, եւ ՏՈԵՄ-ի Հիմնադրութեան 65-ամեակին:

Վարչութեան բացման խօսքը հայերէն լեզուով արտասանեց Տիգրան Միհրանեան: Ան նշեց, որ բառն ու երաժշտութիւնը մեզի հասած են հայ ժողովուրդի ապրած աշխարհագրական շրջանի ամբողջ տարածքէն, ուր մեր ժողովուրդը ապրած, արարած ու զարգացուցած է իր կեանքը: «Իւրաքանչիւր երգ ու տաղ իր մէջ ամփոփած է հարուստ մշակութային ժառանգութիւն մը, պատմական դէպք մը, հերոսական դրուագ մը կամ հերոսի փառաբանութիւնը, որ իր կեան-

տատելու մեր հաւատարմութիւնը եւ յանձնառութիւնը: Հանդէպ մեր ազգային արդար դատին եւ Հնչակեան կուսակցութեան գաղափարներուն», հաստատեց Միհրանեան: Արաբերէն բացման խօսք արտասանեց Գօգօ Միսնեան:

Ապա հերթաբար բեմ բարձրացան օրուան երգիչները՝ Գէորգ Գատեհճեան, Կարօ Կապուտակեան, Յովիկ Թաֆրանեան եւ Պերճ Նազգաշեան: Անոնք մեծաթիւ լիբանանահայերուն ներկայացուցին ազգային-յեղափոխական լաւագոյն երգերու փունջ մը, սկսեալ «Ազու-

Շար.ը էջ 18

Տեղի Ունեցաւ Քեսապի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Վերաբացումը



Հովանաւորութեամբ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան, Կիրակի 9 Յունիս 2017-ին տեղի ունեցաւ վերընծայումը Քեսապի Հայ Աւետարանական Սուրբ Երրորդութիւն Եկեղեցիին: Այս Առթիւ Պէյրուքէն Քեսապ ժամանած էին ՄԱՀԱԵ-Միութեան Նախագահ՝ Վեր. Մկրտիչ Գարակէօզեան, ՄԱՀԱԵ-Միութեան Կեդրոնական Մարմինի Ատենապետ՝ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսեան, Հայկական Սուրբ Սուրբ Հայ Աւետարանական Համայնքապետ՝ Վեր. Յարութիւն Սելիմեան եւ Կեդրոնական Մարմինի անդամներ:

կան օր մըն էր ողջ Քեսապահայութեան համար: Նախքան Քեսապի վերանորոգ Հայ Աւետարանական Սուրբ Երրորդութիւն Եկեղեցիի վերընծայումը՝ ՄԱՀԱԵ-Միութեան պատուիրակութիւնը այցելեց Գալատուրանի, Էքիզուլուքի եւ Քէօրքիւնէի Հայ Աւետարանական եկեղեցիները, իւրաքանչիւրին նուիրելով բեմի նոր Աստուածաշունչ մը:

Լաթաքիոյ շրջանի պետական մարմինները, քաջալերուած Քեսապի Հայ Աւետ. Սուրբ Երրորդութիւն Եկեղեցիի վերանորոգման աշխատանքներէն, ծրագրած էին դրօշակի արարողութիւն՝ Քեսապի



ՄԱՀԱԵ-Միութեան պատուիրակութիւնը վերանորոգ եկեղեցւոյ բացումէն մէկ օր առաջ այցելութիւն տուաւ Քեսապի Հայ Կաթողիկէ եւ Հայ Առաքելական համայնքներու ներկայացուցիչներուն: Կիրակի՝ 9 Յունիսը պատմա-

հրապարակին վրայ բարձրացնելու Սուրբական դրօշը, նախքան եկեղեցւոյ բացումը: Պատանեկան փողերախումբով առաջնորդուած արարողութենէն ետք՝ բոլորը ուղ-

Շար.ը էջ 18

LIFE INSURANCE INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE LONG TERM CARE MEDICARE DENTAL & VISION DISABILITY




Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

(818) 500 9585
(818) 269 0909

Bedros & Siamanto
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815
MARONIANINSURANCE.COM

«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԱՅԱՆ» ԿԱՄ ՊԱՔՈՒԻ ՆՈՐ ՍԱԴՐԱՆՔԸ

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի մամուլային խոսքի մասին Պապայեանի կարծիքով «Մայր Հայաստանն ու պիւրուքը ճշմարտութիւնը աշխարհին ներկայացնելու հարցով կարեւոր ընելիք ունին»:

Պապայեան այս մասին խօսած է օրեր առաջ, անդրադառնալով յատկապէս Արցախի սահմանակից Ալիսանլու գիւղին մէջ եղած դէպքին:

Այստեղ յիշեցնելու կարգով պէտք է նշել, որ 4 Յուլիսին այդ գիւղին մէջ զոհուած էին երեխայ մը եւ կին մը, որոնք, ըստ պարզեցման արձանագրութեան, սպանուած էին հայկական կողմի հակադարձ կրակին հետեւանքով: Ի դէպ Ալիսանլուն նոյն այն գիւղն է, որուն մէջ տեղակայուած հրետանիի ճամբով հայկական պաշտպանական ուժերու չորս զինածառայողներ նահատակուած էին անցնող 17 Յունիսին:

Զոհուած զինուորներն էին՝ Նարեկ Տիրարանի Գասպարեան, Արայիկ Ռուդիկի Մատինեան, Վիգէն Ժիրայրի Պետրոսեան եւ Վարդան Ծովակի Սարգսեան:

Դէպքէն անմիջապէս ետք Արցախի պաշտպանութեան բանակի աղբիւրներ հաղորդագրութեամբ մը հանդէս գալով կը յայտարարէին, որ եղածը անպատասխան պիտի չմնար ու յետ այսու գործի պիտի դրուէին պատժիչ գործողութիւններ, որոնց հիմնական նպատակն է լուծելու հակառակորդի կողմի բոլոր կրակակէտերը:

Սահմանին վրայ առկայ լարուածութիւնը նորոգութիւն մը չէ:

2016-ի Ապրիլին եղած քառօրեայէն ետք ալ Ազրպէյճան չդադրեցուց հրադադարի իր արդէն իսկ հերթական դարձած խախտումները, շատ չաճախ գործի դնելով «քնացնելու» քաղաքականութիւն մը, որուն հիմնական գիծն էր դանդաղ, բայց դիպուկ հարուածներ տալով սպաննել մեծ թիւով հայ զինուորներ:

Ու այս առումով է նաեւ, որ ոչինչ փոխուած է սահմանի ընդհանուր իրադրութեան մէջ: Այսինքն, որ հակառակորդը կը շարունակէ խախտումներ կատարել ու գործի դնել հայ զինուորներ սպաննելու քաղաքականութիւնը, բոլորիս համար դարձած է պարզորոշ:

Ու այդ ընդհանուր իրադրութեան ու յատկապէս Արցախի իրադարձութիւններուն հետեւող եւ հասարակական կարծիք ստեղծողներուն մօտ հասունցած է այն գաղափարը, որ հայկական կողմը ամէն գնով պէտք է համապատասխան կերպով արձագանգէ եղածներուն եւ եթէ հարկ ըլլայ կատարէ նախարարական եւ կանխարգելիչ գործողութիւններ:

Երեք տարի առաջ, երբ հարցազրոյց մը կատարեցի ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանին հետ, պարոն նախարարը մանրամասն բացատրութիւններ տուաւ սահմանին

առկայ ընդհանուր իրադրութեան մասին, նշելով նաեւ, որ հայկական կողմը, օգտագործելով իւրաքանչիւր յարմար առիթ, կը շարունակէ տարբեր միջոցներ գործադրել եւ զինուորական տարբեր մեթոտներ գործի դնելով կը փորձէ թակարդներ լարել եւ կանխել



Վահրապետ Պապայեան

ամէն տեսակի թափանցման (տիվէրսիոն փորձ) փորձ:

Այդ օրերուն հանրութեան գգոնութիւնը՝ կապուած Արցախի սահմաններու ընդհանուր դրութեան, այսօրուան «ուժգնութիւն»ը չունէր: Ժիշդ է, որ Արցախի սահմանին կատարուած իւրաքանչիւր գարգացում տեղ կը գտնէր լրահոսին եւ լրատու կան ծառայութիւններու հաղորդումներուն մէջ, բայց յատկէր, որ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ սփիւռքի հասարակութեանց համար այդ դէպքերը այսօրուան նշանակութիւնը չունէին:

«Ուրախ ենք, որ կրնանք ընել այս ամէնը անոնց յիշատակին եւ հանրութիւնը կ'իրագրենք աշխարհի տարբեր վայրերու մէջ մարդկանց դէմ իրականացուող վայրագութիւններու մասին՝ պարզեւատրելով անոնց, որոնք շարունակաբար կը պայքարին այդ խնդիրներուն դէմ՝ վտանգելով սեփական կեանքը», ըսաւ «Արորա» մարդասիրական նախաձեռնութեան համահիմնադիր Ռուբէն Վարդանեսը: «Հայաստանը, որ առաջընթաց ապրած է՝ չնայած անցեալի տառապանքներուն, կը յաւակնի դառնալ մարդասիրական գաղափարներու, քննարկումներու եւ գործունէություններու համաշխարհային կեդրոն: Միւս տարի եւս կատարելով այս կարեւոր միջոցառումները՝ «Արորա» մարդասիրական նախաձեռնությունները կը ձգտի շարունակել գործով արտայայտել երախտագիտությունը՝ աջակցելով կարիքի մէջ գտնուողներուն»:

2018 թուականի միջոցառումներուն ընթացքին տեղի պիտի ունենան «Aurora Dialogues» քննարկումները, որ միջազգային հար-

թակ է գիտնականներու եւ փորձագէտներու համար՝ ու սուսնասիրելու եւ քննարկելու մարդասիրական մարտահրաւիրները: Համաժողովը պիտի ձգտի բացայայտել խնդիրները, վերլուծել անցեալի դասերը եւ խրախուսել նորարարական գործունէություններ կազմակերպելու՝ ապագան լաւ դարձնելու նպատակով: 2018 թուականի «Aurora Dialogues» քննարկումներուն եւ «Արորա» մրցանակի միջոցառումներուն ժամանակացույցը եւ լրացուցիչ տեղեկութիւնները հասանելի պիտի ըլլան յառաջիկայ ամիսներուն, «www.auraprize.com» կայքին մէջ: 2018 թուականի «Արորա» մրցանակին համար առաջադրումները կարելի է կատարել մինչեւ 8 Սեպտեմբեր 2017, «https://auraprize.com/hy/prize/detail/nominatenow» հասցեով 28 Մայիսին երգիչ եւ երգահան Շարլ Ազնաւուր Երեւանի մէջ յայտարարեց 2017 թուականի «Արորա» մրցանակի դափնե կիրին՝ բժիշկ Թոմ Քաթինայի անունը: Որպէս «Արորա» մրցանակի երկրորդ դափնեկիր, բժիշկ Քաթինայի արժանացաւ 100,000 տոլար պարգևի այն նուիրուած աշխատանքին համար, զոր կ'իրականացնէ Սուտանի՝ պատերազմէ եւ սովէ քայքայուած Նուպայի լեռներուն որպէս տեղի միակ վիրաբույժ: Պարգևէն բացի բժիշկ Քաթինայի հնարաւորութիւն ստացաւ՝ 1 միլիոն տոլար դրամաշնորհ առաջադրելու կազմակերպություններու:

Անոնք են Ափրիկեան Առաքելութեան Առողջապահական Հիմնադրամը (AMHF), Կաթոլիկ Առողջապահական Առաքելութեան Խորհուրդը (CMMB) եւ «Aktion Canchanabury»-ն: Այս կազմակերպությունները պիտի շարունակեն աջակցել կարիքաւոր եւ տառապանքի մէջ գտնուող համայնքներուն՝ այսպիսով շարունակելով նուիրատուութեան շղթան:

«Արորա» մրցանակի Ընտրող Յանձնաժողովի կազմին մէջ ընդգրկուած են Նոպելեան դափնեկիրներ Օսքար Արեսաը, Շիրին Էպատին եւ Լեյմա Կպովէն, Իրլանտայի նախկին նախագահ Մերի Ռոպինսընը, մարդու իրաւունքներու պաշտպան Ջինա ձիւլանին, Աւստրալիայի արտաքին գործոց նախկին նախարար եւ Միջազգային ձգնաժամային Խումբի պատուաւոր նախագահ Կարէթ Էլանսը, Մեքսիքայի նախկին նախագահ Էռնեսթո Սեպուլեոն, Նիւ Եորքի Գարնեկի ընկերութեան նախագահ Վարդան Գրիգորեանը եւ օսքարակիր դերասան ու մարդասէր ձորճ Քրուինին: Խաղաղութեան Նոպելեան մրցանակի դափնեկիր լուսահոգի էլի վիզելը Ընտրող Յանձնաժողովի առաջին համանախագահն էր:

«Արորա» մրցանակի մասին Հայոց Յեղասպանություններին վերապրողներու անուանով՝ ի երախտագիտութիւն զանոնք փրկողներուն, «Արորա» մրցանակի դափնեկիրին ամէն տարի 2015-2023 թուականներուն (ի յիշատակ ութ տարի տեւած Հայոց Յեղասպանություններին 1915-1923) պիտի շնորհուի 100,000 տոլար պարգև եւ բացառիկ հնարաւորութիւն՝ շարունակելու նուիր-



րատուութեան շղթան՝ 1.000.000 տոլարի դրամաշնորհ առաջադրելով իրեն ոգեշնչած եւ գործի մղած կազմակերպություններուն: Մրցանակի դափնեկիրները ճանաչման կ'արժանանան այն բացառիկ ազդեցություն համար, զոր անոնք իրենց գործողություններով ունեցած են մարդկային կեանքի պահպանման եւ մարդասիրությունը յառաջ մղելու վրայ:

«Արորա» մարդասիրական նախաձեռնությունների մասին «Արորա» մարդասիրական նախաձեռնությունները, որ ստեղծուած է Հայոց Յեղասպանություններին վերապրողներու անունով՝ ի երախտագիտութիւն զանոնք փրկողներուն, կը ձգտի հնարաւորութիւն տալ մերօրեայ հերոսներուն՝ կեանք եւ յոյս պարգևել անոնց, որոնք մարդասիրական աջակցություն խիստ կարիք ունին, այսպիսով շարունակել մարդասիրությունների շղթան աշխարհով մէկ: «Արորա» մարդասիրական նախաձեռնությունները գործով արտայայտուած երախտագիտություն է: Այս

կ'իրագործուի նախաձեռնությունների տարբեր ծրագիրներու օգնությամբ՝ «Արորա» մրցանակ, «Aurora Dialogues» քննարկումներու շարք, «Արորա» մարդասիրությունների ցուցիչ, երախտագիտությունների Նախագիծեր եւ «100 LIVES» ծրագիր: «Արորա» մարդասիրական նախաձեռնությունները Վարդան Գրիգորեանի, Նուպար Աֆէեանի եւ Ռուբէն Վարդանեսի մարդասիրական ձեռնարկումն է, որոնց արդէն երկրորդ տարին միացած են քանի մը տասնեակ նուիրատուներ եւ գործընկերներ: Նախաձեռնությունները իր շուրջ կը հրաւիրէ բոլորը, որոնք կ'ողջունեն նուիրուածություններ մեր համընդհանուր մարդկայնություն:

«Արորա» մարդասիրական նախաձեռնությունները ներկայացուած է երեք կազմակերպություններու կողմէ՝ «Aurora Humanitarian Initiative» հիմնադրամ (Նիւ Եորք, ԱՄՆ), «100 Lives» հիմնադրամ (ժընև, Զուիցերիա) եւ «IDeA» հիմնադրամ (Երեւան, Հայաստան):

ST. GREGORY ARMENIAN APOSTOLIC CHURCH PASADENA

KEF Time L.A.

With "internationally acclaimed" ED BILEZIKJIAN Ensemble
 Ed Bilezikjian - Clarinet
 Antranig Kzirian - Oud & Harry Bogosian - Dumbegs
 Plus DJ spinning the top dance hits!

Saturday, August 12, 7:30 P.M.
 At Saint Gregory "Geragos Hall" 2215 E. Colorado Blvd., Pasadena CA 91107
 For tickets call:
 Vera [Church Office]: 626-449-1523
 Vahe: 562-715-8730
 Donation: \$45
 Includes Full Armenian Dinner!

ՆՈՐ ՆԱՄԱԿԱՆԻՇՆԻ ՆՈՒԻՐՈՒՎԾ «ՄԵԾԱՆՈՒՆ ԶԱՅԵՐ. ԶԱՍՕ ԲԵԿՆԱԶԱՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 125-ԱՄԵԱԿԸ» ԹԵՄԱՅԻՆ



«Ոսկե Միրան» միջազգային կինոփառատոնի շրջանակներում մարտի 15-ին և շրջանառության մէջ է դրուել մէկ նամականիշ՝ նուիրուած «Մեծանուն հայեր. Համօ Բեկնազարեանի ծննդեան 125-ամեակը» թեմային:

Տրանսպորտի, կապի և տեղեկատուական նախարարութեան լրատուական ծառայութիւնից յայտնուած են, նամականիշի մարտում իրականացրել են տրանսպորտի, կապի և տեղեկատուական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսեանը, ՀՀ մշակուցի նախարար Արմէն Ամիրեանը, «Ոսկե Միրան» միջազգային կինոփառատոնի տնօրէն, կինոռեժիսոր Յարութիւն Խաչատրեանը, կինոռեժիսոր Ռոման Բալայեանը, «Հայ Փոստ Թրասթ Մենեջմենթի» գլխավոր տնօրէն Խուան Պաբլօ Գեչիջեանը, ՀՀ Ֆիլատելիստների միութեան նախագահ Յովիկ Մուսայեանը:

Նամականիշի վրայ պատկերուած է հայ մեծանուն կինոռեժիսոր Համօ Բեկնազարեանի դիմանկարը: Նամականիշի աջ մասում հատուածներ են առաջին հայկական համը ֆիլմից՝ «Նամուս»-ից, և առաջին հնչունային ֆիլմից՝ «Պեպօ»-ից՝ ներկայացուած կինոժապաւէնի մէջ: Նամականիշի խորապատկերին պատկերուած է «Հայֆիլմ» կինոստուդիայի լոգոտիպը:

Նամականիշն ունի 170 ՀՀ դրամ անուանական արժէք: Այն տպագրուած է Ֆրանսայի «Cartor» տպագրատանը: Նամականիշի դիզայնի հեղինակներն են Դաւիթ Դոպլաթեանը և Վահագն Մկրտչեանը:

ԶԱՍՕ ԲԵԿՆԱԶԱՐԵԱՆ

Համօ Բեկնազարեանը (Մայիսի 19 1892, Երեւան - Ապրիլի 27 1965, Մոսկուա) 1914 թ. սկսել է նկարահանուել ռուսական ֆիլմերում: Դասուել է ռուսական համը կինոյի աստղերի շարքին: Նկարահանուել է աւելի քան 70 ֆիլմերում: 1918 թ. աւարտել է Մոսկուայի առեւտրի ինստիտուտը (մինչ այդ պրոֆեսիոնալ մարմնամարզիկ է եղել): 1921 թ գլխավորել է Վրաստանի կինոստուդիայի կինոյի բաժինը, ապա դարձել Վրաստանի Պետկինոյի ռեժիսոր: 1923 թ. Համօ Բեկնազարեանը հաստատուել է Հայաստանում և հիմնադրել «Հայֆիլմ» կինոստուդիան: 1926 թ. նկարահանել է հայկա-

կան առաջին գեղարուեստական ֆիլմը՝ «Նամուս»: Ականաւոր ռեժիսորի թողած ստեղծագործական վիթխարի ժառանգութիւնից կարելի է դատել, որ նա անասման հնարաւորութիւններ ունէր դրսեւորելու իր տաղանդի ահռելի ուժը: Դրա վառ ապացոյցն այն էր, որ 1920-ականներին ընդունել է Հայաստանի կառավարութեան հրաւերը, քաջ տեղեակ լինելով, որ այնտեղ կինոարտադրութեան և ստեղծագործական գործունէութեան համար նոյնիսկ նուազագոյն հիմքեր չկան: Այդ տարիներին նա սիմուլտրիկ գումարներով նկարա-



հանել է այնպիսի ժապաւէններ, ինչպիսիք են «Զարէ», «Շոր և Շորշոր»: Նրա ստեղծած առաջին հայկական ձայնային ֆիլմը՝ «Պեպօ»ն, դարձաւ ոչ միայն Բեկնազարեանի գլուխգործոցը, այլև տեղ գտաւ ժողովրդական կինոյի ոսկե պահուցում: Աւելի ուշ նկարահանել է հայ կինոյի 2 այլ հրաշալի ֆիլմեր՝ «Դաւիթ Բեկ» (1943 թ.) և «Զանգեզուր» (1938 թ.): Վերջինի համար Ստալինի կողմից խրախուսական մրցանակ է արժանացել: «Երրորդ քարաւան» ֆիլմը, որն ամենայն հաւանականութեամբ դառնալու էր նրա կարիերայի ամենաշոգորուած ֆիլմը, մնում է անաւարտ, քանի որ նկարահանումները կեսից արգելու են, իսկ նախագիծը՝ փակուած: Բեկնազարեանը խոր ցաւով և կսկիծով լքում է «Հայֆիլմ» կինոստուդիան ու Հայաստանը և սկսում է ֆիլմեր նկարահանել միջինասի-

ական հանրապետութիւններում: Թաղուած է Մոսկուայի հայկական գերեզմանատանը կոնջ՝ Սոֆիա Վոլխովսկայա-Բեկ-Նազարովայի շիրմի մօտ:

Համօ Բեկնազարեանը սովորել է Երեւանի, ապա՝ Տաշքենդի գիմնազիաներում, 1918 թ-ին աւարտել է Մոսկուայի առեւտրի ինստիտուտը: Երիտասարդ տարիներին եղել է պրոֆեսիոնալ ըմբիշ: Մարտի կեղծանունով ելոյթներ է ունեցել կրկեսում, մասնակցել միջազգային մրցումների:

1915 թ-ից Համօ Բեկ կեղծանունով նկարահանուել է Յարոսլաւի, Մոսկուայի կինոստուդիաներում: Խաղացել է շուրջ 100 դեր: 1921 թ-ից եղել է Վրաստանի լուսժողովարանի կինոբաժանումում քի վարիչ, ապա՝ կինոստուդիայի տնօրէն և գեղարուեստական ղեկավար, որտեղ նկարահանել է «Անարգանքի սեան մօտ» (1923 թ.), «Կորսուած գանձեր» (1924 թ.), «Նաթելլա» (1925 թ.) կինոնկարները, որոնք աչքի են ընկնում դինամիկ մոնտաժով, արեւելեան էկզոտիկ երանգաւորումով:

1925 թ-ին հրաւիրուել է Երեւան և ձեռնամուխ եղել հայկական կինոյի ստեղծմանը: Նոյն թվականին Բեկնազարեանը նկարահանել է «Նամուս» գեղարուեստական ֆիլմը, 1926 թ-ին՝ հայկական առաջին կինոկատակերգութիւնը՝ «Շոր և Շորշորը»: Կինոյի համար շրջանի լաւագոյն գործերից են նաեւ նրա «Զարէ» (1926 թ.), «Խապուշ» (1927 թ.), «Տունը հրաբխի վրայ» (1928 թ.) և այլ կինոնկարներ, որոնք խոշոր ներդրում են կինոարուեստի պատ-

մութեան մէջ: Բեկնազարեանը, համադրելով հայ դերասանական դպրոցի և գրականութեան բնորոշ առանձնատկութիւնները, սկզբնաւորել է կինեմատոգրաֆիայի ազգային ոճը: Այդ սկզբունքը կինոռեժիսորը զարգացրել է իր հնչուն կինոնկարներում. դրանցից առաջինը «Պեպօ» (1935 թ.) ֆիլմն էր, որը թեմայի խորութեամբ, վառ արտայայտականութեամբ և կինոպատումի հզոր ոճով երևոյթ էր նաեւ համաշխարհային կինոարուեստում: Նրա «Զանգեզուր» (1938 թ.), «Դաւիթ Բեկ» (1944 թ.) ֆիլմերը նուիրուած են հայ ժողովրդի պատմութեանը:

Բեկնազարեանը նկարահանել է նաեւ փաստավաւերագրական ֆիլմեր՝ «Երկրաշարժ Լենինականում» (1926 թ.), «Երկիր Նաիրի» (1930 թ.) և այլն: Բեկնազարեանը կինոնկարներ է ստեղծել նաեւ այլ երկրների կինոստուդիաներում (Ադրբեջանում՝ «Սաբուհի», 1941 թ., Ուզբեկստանում՝ «Բնակարանամուտի խնձոյք», 1954 թ., Տաշքիստանում՝ «Նասրեդդինը Խոջենթում», 1959 թ., կինոռեժիսոր էրազմ Քարամեանի հետ):

Նա իր ազգային ինքնատիպ արուեստով մեծապէս նպաստել է հայ կինոյի զարգացմանը: Բեկնազարեանի կեանքին և ստեղծագործութեանն անդրադարձել են հայ և օտարազգի բազմաթիւ կինոգէտներ: Բեկնազարեանը հեղինակ է «Յուշեր դերասանի և կինոռեժիսորի» (1965 թ.՝ ռուսերէն, 1968 թ.՝ հարերէն) գրքի:

Բեկնազարեանի անունով է կոչուել Հայֆիլմ կինոստուդիան:

LET'S CELEBRATE

You Are Cordially Invited

AGBU
WESTERN DISTRICT
GALA 2017

Saturday
SEPTEMBER 9, 2017

OUTDOOR COCKTAIL RECEPTION 7PM

DINNER 8PM

UNIVERSAL STUDIOS HOLLYWOOD

THE GLOBE THEATRE
100 UNIVERSAL CITY PLAZA
UNIVERSAL CITY, CA 91608
(FRANKENSTEIN PARKING LOT)

FOR TICKETS CALL 626-794-7942
OR EMAIL GALA@AGBUCA.ORG

GENERAL ADMISSION \$250

YOUNG PROFESSIONALS \$125

#AGBUGALA2017 @AGBU_WDC

RESERVE BY AUG. 18, 2017

ՎԱՐԴԱՎԱՌԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԱՐԱԾԱՆԻ ԱՓԻՆ

Իրանական դիցաբանությունը կրող աստուածներից առաջ հայերն ունեցել են դիցաբանութեան հին համակարգ, արգասիքը իքնատիպ մշակոյթի - **Մովսէս Խորենացի**

ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Սօսեաց անտառակի աղբիւր, Արմին-հայերի լեռնաշխարհի դրախտում բխած աղբիւր էր: Վարդավառին, Աստղիկ ու Վահագն գալիս ամբողջ ջուր ըմպում, երեսները ցողում, իրար վրայ ջուր ցանում: Քրմուհիներ, Աստղիկին ու Վահագնին թեւանցուկ արած, մեհենական տաղերի քաղցրահունչ երգերով պատել աղբիւրի շուրջը: Գործը, աշխարհական մարդիկ շարքեր կազմած շուրջ պարեր բռնել: Վահագնի քրմապետը աղբիւրի ջրով օծել նրանց, Վահագնը ծնրադրել Աստղիկին վարսերից հոսած ջուր ըմպել: Քրմապետը, նրանց թեւանցուկ արած, աշխարհական մարդկանց հետ գնացել Աշտիշատի իրենց վահէ-վահեան մեհեան:

Թագաւորներ, իշխաններ, աշխարհական մարդիկ վարդերի փունջեր վեր պահած, նրանց թերթիկներից հիւսած կարմիր հանդերձով Աստղիկին Արածանի ամբարտաւանքը տարել, նրան նուիրուած վարդերի տօն՝ Վարդավառ տօնախմբելու, Նար Մովինար դիցուհու ջրերի հրավառութիւն լինէր: Վարդավառ, Աստղիկ դիցուհուն ու Նար Մովինարին նուիրուած աշխարհական տօնախմբութեան հանդէս էր:

Վարդավառեան տօն... ջրի պաշտամունքի, արգասաւորութեան, պտղաբերութեան հովանաւոր աստուածների ոգեղէն իմաստութիւնն էր: Վարդավառեան տօնախմբութիւնը կատարուել էր սարերի լանջերի հազար գոյնների ծաղկունքում, ջրերի ակունքների մօտ, Արածանի Սրբազան գետի ջրերի ամբարտաւանքը: Ջրի հովանաւոր Նար Մովինար դիցուհու եւ Աստղիկին նուիրուած Վարդավառի տօնախմբութեան պատուին գոհաբերութիւններ էին կատարուել: Ջրեր աղբերսող ծէսերն ունեցել էին անձրեւ խնդրելու ու երաշտը կանխելու իմաստ: Վարդավառը, բերքահաւաքի հետ կապուած առաջին տօններից էր, որի առիթով կատարուած մեհենական ծէսերը նուիրուել էին բերք ու բարիք պարգեւող Հայոց աստուածներին: Վարդավառին, մեհենաններին նուիրել էին՝ ցորեանի հասկերի խուրձեր, կիթոցներով մրգեր, խնդրել արտերն ու այգիները գերծ մնային բնութեան արհաւիրքներից: Վարդավառեան տօներին աղանիւներ էին թուցրել, ջրախաղեր կազմակերպել, գուարթութիւններ ու խրախճալի խնձոյքներ կատարել: Աշխարհական մարդկանց հեթանոսական խրախճանքի տօնախմբութիւն էր:

Արմինայի, արեւելքի Արքաների-Արքայ Տիգրանի գորականների հետ մուսանների պաշտամունքի լեռան լանջեր հասած Արմին-հայերը հազար-հազար տարիներ յետոյ էլ իրենց հոգիների տաճարներում վառել են Նար Մովինար դիցուհու ջրի պաշտամունքի յուշը: Երաշտի ժամանակ, նրանց

մի դուստրը, մի բուռ հող ամբին, անխօս քայլել էր դէպի ծով, կանգնել նրա ալիքների առաջ, հողը նետել նրա փրփուրներին, կանչել՝ «Նար Մովինար, լսի՛ր աղաչանքը Արմին դուստրի, այս լեռան լանջերի արտերի ու այգիների բերքն է նուազում, ջուր են աղբերսում, որ հասունանան: Նար Մովինար, ամպերը գրկած արի մեր շէներ, անձրեւ տեղա՛ մեր հողին, որ բարիք հոսի այնտեղ: Արմին դուստրի շէն վերադառնալուց կարճ ժամանակ անց, իրապէս անձեւ էր տեղացել: Վկայ եմ ես, մանչ ատեն տեսել եմ դէպի ծով քայլող Արմին դուստրին, այդ անձրեւի ջրերից թրջուել է մարմինս, նրա արթնած հրճուանքից իսպառացել էր մանուկ հոգիս:

Արածանի սրբազան գետի ամբարտաւանքը, լեռների լանջերից եկած գեփիւռի թովչանքից փրփուր էին արեւից շիկնած ցորեանի ու պտղատու այգիների շարքերը, մօտիկ հարթ տարածութիւնում իշխանական վրաններից յառնած կրակի ծուխի սպիտակ ծուխներն էին բարձրանում: Ծինականներ դիտում էին նրանց երկինք ճախրումը ու անխնայումը նրա կապույտ պաստառին: Հաւատում էին, որ Հայոց լեռնաշխարհում փլած դրախտի, այնտեղից վտարուած առաջին երկու մարդկանց Աստուծոյն յղած իրենց բազմացման աւետիսն է: Աշխարհական մարդկանց երգերի, ծիրանափողերի հնչիւնների, մարդկանց խանդավառ կանչերի բացակայանքը թիւնները Արածանի ջրերն էին փոթորկել, նրա ամբին կանգնած մարդիկ դիտել ալիքների սահանքը, սպիտակած ջրերի քրքիջները, նրանց երեսներին պարեկող աստղազարդ ձկների խայտանքը: Վարդավառի տօնախմբութեանը եկած մարդկանց հաւաքատեղիի երկնակամարին ամպերի մի մեծ գանգուած հանդարտ ներքեւ էր իջնում: Երբ այն իրենց հաւաքատեղիի վրայ էր, տեսել էին ամպերը իր թեւերի վրայ պահած Նար Մովինար դիցուհուն: Աստղիկը ու Վահագնը վագել էին նրան ընդառաջ, Նար Մովինարը թափահարել էր ձեռքերը... անձրեւ տեղացել, թրջուել էին տօնախմբութեան եկած մարդիկ: Վարդավառի անձրեւի ջրերով թրջուած մարդիկ զրկել էին իրար, գոհաբանութեան խօսքեր սակ Նար Մովինարին: Աստղիկն ու Վահագնը գրկել էին իրար, իրենց մարմիններից հոսած ջրերով իրարու երեսները ցողել: Աստղիկը վագել, գրկել Նար Մովինարին, ուրախացել, որ Արածանի սրբազան գետի ամբարտաւանքը, վարդավառի ծաղկունքի ու ջրերի տօնախմբութեանը մասնակցելու: Բնութիւնը աստուածների մեհեանն է, Արածանի ամբարտաւանքի բաց մեհենում պատարագել էին նրանց իմաստութիւնը: Նար Մովինարի ջուրը, տիեզերական արարումի հէքիաթ է: Ցորեանի նորահաս ծիւրերը բարձրանում, ըմպում



գարնան անձրեւի ջրերը, առաւօտեան շաղի կաթիլներն են շողում, արեւի լոյսը քաղում, հասկեր ծնում, հովիկների հետ ոսկեպար բռնում: Ես, Մուսաների Լեռան շէնի լաճ տղեկ, մտել ցորեանի արտեր, հասկերին իջած գարնանային անձրեւի շիթեր հաւաքել, ցողել դէմքիս, հրճուացել բնութեան արարչութեամբ: Անձրեւին, շէնի տան պատշգամբ ելել, դիտել երկնից իջած ջրերի հոսքը, ունկնդրել տիեզերական հեռուներից աստուածների իմաստութեան շնչիւնը, գոցել ակներս, երեւակայութեանս կրակաշող պաստառին տեսել Նար Մովինարին, Աստղիկին, Արածանի ամբարտաւանքի տօնախմբութեանը եկած ծիրանի հագած թագաւորներին, շինականներին:

Արածանի սրբազան ջրերում պատարագել էին Նար Մովինար ու Աստղիկ դիցուհիների ջրի ու իրենց լեռների լանջերի ծաղկունքի իմաստութիւնը, վարուող վարդերի՝ Վարդավառը: Արմին-հայերի աշխարհի արտերին ու այգիներին հոսած ջուրը՝ տիեզերական արարումի հէքիաթ էր: Այգիներում ծաղկած ծառերը իրենց թեւերը երկինք պարզած ըմպել Նար Մովինարի վարարած ջուրը, գնացել նրանց ոստերին, տերեւներին կեանքի հէքիաթ արարում, ծաղկունքի երկունք եղել, անուշ բոյրով քաղցրահամ պտուղ հասունացել:

Նար Մովինար դիցուհին երբ ջուր էր տեղում Հայոց լեռնաշխարհին, շէների մարդիկ երգերով, թմբուկների զարկերով մեհեններ գնացել՝ փառաւորել նրա իմաստութիւնը, Գողթան երգիչներ իրենց իրենց ոգու սքանչանքով հէքիաթային տաղեր ձօնել, սիրել էին նրան: Նար Մովինար դիցուհին յղիացել էր Հայոց լեռնաշխարհի ծովի ջրում, ծնանէր Սանասար ու Բաղտասար որդիներին: Արմին-հայեր Սանասար աւագ գաւակին, իրենց կրակ, ու արեւ աստուծոյ պատուին Սան-ասար (Սան-Տոնարեւ, «ար» Արա աստուած) կոչել: Սանասարի որդի Մհեր (Միհր) ծովի ջուր իջել, նստել «Քուրկիկ-Ջելալին»-ի ոսկեղէն թամբին, նրա ձեռքին տուել «Թուր Կեծակին»: Նրա Դաւիթ որդին, այդ թուրով արմինների աշխարհը գաւթելու ելած, վրան քառսուն ջաղացքի քար ու քառսուն գոմշի կաշի կապած Մարայ-Մելիքին՝ երկու կէս արել: Նրա որդի՝ փոքր Մհեր աշխարհից գայրացած, «Քուրկիկ-Ջելալին» նստած նախնիների ոստանի քարէ դռնով անձաւ մտել: Թագաւորներ, իշխաններ, աշխարհական մարդիկ կէս շրջան

շղթայ կազմել Աստղիկի ու Նար Մովինարի շուրջը, թագուհիներ մօտեցել Նար Մովինարին, հպել նրա թաց իրանին, մկրտուել նրա իրանից հոսող ջրի կենարար օրհնութեամբ: Աստղիկ դիցուհին ու Վահագն Նար Մովինարին իրենց թեւերի վրայ պահած գնացել Արածանի, իջեցրել ջրեր, օծել սրբազան լեռնաշխարհի ոգեղէն հրաշքով: Արածանի սրբազան գետ, Մովինարը երկնակամարի անջրթափանց կապույտ հանդերձով իջել գետի ալիքներին, ջրի հանդէս էր, ջրերը բարձրացել, գրկել նրան, օծել իրենց արարիչին: Եթէ ձեռ երեւակայութեան պաստառներին արարուի այդ տարերքը, մի՛ սարսափէք, աստուածների հրաշագործ արարումն էր այն:


Հայոց նախնիների մեհենների քրմուհիները, քաղցրահունչ երգերի տաղերով, Աստղիկին տարել Արածանի ջրերի ամբարտաւանքը՝ մկրտել Նար Մովինարի ջրով, դրել Վահագնի բազկատարած թեւերին: Արեւակունք աչքերով այրել Աստղիկի դէմքը, սեղմել իրանին, մշուշոտ հանդերձն է ետ տուել, խարտեաշ վարսերով լանջն է գոցել: Բոլորը բացատ ելել . . . Աստղիկին նուիրուած Վարդավառի տօնախմբութիւնն էր: Թմբուկ էին զարկել, ծիրանափողեր հնչել, քրմուհիները Տիր աստուծոյ տաղերի էին հնչել: Թագաւորներ, իշխաններ, աշխարհական մարդիկ առանց դասի խտրութեան բոլորակ շարքեր կազմել, եզրերին որդան կարմիր հագուստներով, կրակավառ թաշկինակներ վեր պահած թագուհիներն էին: Ջարկում են թմբուկները, հնչում էին նուագարանները: Թագուհիներն էին փերիներին նման ճախրել, վեր պարզած թաշկինակներն էին գեփիւռի հետ օրօրուել, հրդեհուէր էր բացատը, պարի ելած մարդկանց ելեւէջներով ալիքուել էր, դողացել էր բացատը: Վահագնը, Աստղիկին ու Նար Մովինարին յաղթ բազուկների վրայ վեր պահած, մտել բացատ: Սաստկացել էին թմբուկների զարկերը, հասկանացել նուագարանների հնչիւնները, պարի ելած արմին-հայերը ուժգին զարկել էին գետինը, Արածանի ջրերն էին զարկուել իրար, փշրուել, լոյսի հեղեղ վառել: Եփրատ հասած Արածանի ջրերը, Արմին-հայերի ողջոյնը տարել հարաւի ցեղակիցներին:

Ո՞վ դու արարչական Արմին-Հայ, եթէ Արածանի ամբարտաւանքը Վարդավառ շէնի տօնախմբել, քու հանգրուանած երկրում այն տօն

ՎՐԻՊԱԿ
Կ'ուզենք տեղեկացնել մեր ընթերցողներուն որ «Մասիս»-ի անցեալ շաբթուան Յուլիս 15, 2017 թուականի, թիւ 27 (1827), թիւի մէջ հրատարակուած էջ18-19, «Մեսրոպի ու Սահակի Յիշատակութեան Տօն» յօդուածի հեղինակը՝ Պօղոս Արմենակ Լագիսեանն է:

ՄԱՐԴՈՒ ԱԶՔԵՐԸ ԵՒ ԲՆԱԴՈՐՈՒԹԻՒՆԸ

Մեծ աչքեր. նման աչքեր ունեցողները ի ծննդեան առաջնորդներ են՝ առնական, խելացի, շփուող, արթնաթիթի: Անոնց յատուկ է իշխանութեան ձգտումը, անոնք միշտ յատակորէն գիտեն, թէ ինչի կը ձգտին, գանոնք կ'առանձնացնէ ապշեցնող աշխատունակութիւնը: Իբրեւ կանոն, մեծ աչքերով մարդիկ բաց են շրջապատի հետ շփման համար, անկեղծ են եւ բնական իրենց զգացումներու դրսեւորումներուն մէջ: Եթէ աչքերը անհամաչափօրէն խոշոր են, յատկապէս՝ կտրուկ դիմագիծերու եւ լայն յծաքերու համադրութեամբ, ատիկա կը խօսի միւսներուն իշխելու ցանկութեան եւ խստութեան մասին:



ոլնեցողները կ'առանձնան խոցելիութեամբ, հաւասարակշռութեամբ, երազկոտութեամբ: Անոնք չունին ձգտումներ, բայց հրաշալիօրէն կը կողմնորոշուին նիւթական հարցերու մէջ, իրենց հայեացքներուն մէջ պահպանողական են եւ գիտեն ինչպէս վարուիլ դրամի հետ: Անոնք կը վերլուծեն ամէն ինչ, չեն խօսիր իրենց խնդիրներուն մասին, ցոյց չեն տար իրենց ապրումները: Եւ չնայած խորին կամ աչքերու տէրերը շրջապատին կը վերաբերին որոշ զգուշութեամբ, միշտ պատրաստ են օգնութեան հասնելու անոնց, որոնք ունին ատոր կարիքը:

Շիւ. աչքերու նման ձեւ կը դիտարկուի սրտաբաց, բարի եւ հանդուրժող մարդոց մօտ: Լաւատեսութիւն, քաջութիւն, ինքնավստահութիւն. այս որակներն են, որոնք կը նպաստեն անոնց յաջողութեան: Շիւ աչքերով մարդիկ հակուած են արկածախնդրութեան, որ անոնց յաճախ կը ստիպէ չմտածուած արարքներ կատարել:

Վեր բարձրացած արտաքին անկիւններով. նման աչքերով մարդոց կ'առանձնացնեն մեծահոգութիւնը, յամառութիւնը, ընկերային յարաբերութիւններ ստեղծելու եւ երեխայ դաստիարակելու հիանալի հմտութիւնները: Նման աչքեր ունեցողներուն կ'ուղեկցի ասպարէզի յաջողութիւնը, քաջութիւնը եւ ստեղծագործելու հակումը, բայց ատիկա անոնց չի խանգարեր ազատ ըլլալ եւ պատրաստ որեւէ գործողութեան՝ յանուն «համեղ» պատառի:


Ցած իջած արտաքին անկիւններով. աչքերու նման ձեւ կը ստեղծէ տիրութեան զգացում, բայց անոնց տէրերը, ընդհակառակը, ուշադրութիւն կը գրաւեն մեծ լաւատեսութեամբ եւ չափազանց մեծ բարութեամբ: Անոնք աւելի հակուած են հոգ տանելու մտերիմներուն, քան՝ իրենք իրենց: Անոնց յատուկ է վճռականութիւնը եւ հմայքը, բայց անոնք չեն կրնար ճիշդ դնել առաջնահերթութիւնները, որուն հետեւանքով անընդհատ կը լուծեն ուրիշին խնդիրները:

3 ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ, ՈՐՈՆՔ ԶԵՐ ԱՈՒԲՕՏԸ ԲԱՐԻ ԿԸ ԴԱՐՁՆԵՆ

1. «Աստուած կու տայ անոր, որ շուտ կ'արթննայ»: Սկիզբի համար պէտք է սորվիլ կանուխ արթննալ: Կը թուի, թէ դժուար է, բայց կանուխ արթննալը կ'երաշխաւորէ առաւօտեան հրաշալի առողջութիւն, ի հարկէ ժամանակին քնանալու պայմանով: Արթննալու իտէյալական ժամանակ կը համարուի առաւօտեան 6-ը եւ աւելի շուտ: Իզուր չէ, որ մեր նախնիները կ'արթննային մայրամուտի հետ եւ՝ առանց որեւէ զարթուցիչի: Աւելի ուշ արթննալը չի է հոգեւորական վիճակի խանգարումով, որոշ հիւանդութիւններու սրումով, դիմադրողականութեան նուազումով, գլխացաւերով, մեծ ախորժակով եւ նոյնիսկ ճնշաստով:

Փորձեցէք գոնէ մէկ շաբաթ քնանալ 22-23:00-էն ոչ ուշ քան արթննալ 6:00-ին: Հետեւեցէք ձեր ինքնագզացողութեան եւ տրամադրութեան: Վստահ եղէք, որ դուք գրեթէ անմիջապէս դրական պիտի զգաք: Եւ այն պատրուակը, թէ դուք «բու» էք, արդարացում չունի: Մենք բոլորս ի բնէ «արտոյտներ» ենք, ատիկա մեր մէջ դրուած է բնութենէն, ուր մայրամուտին հետ բոլոր կենդանի արարածները կը քնանան, իսկ կ'արթննան արեւածագին հետ: Մեզմէ շատերուն «բու» դարձուցած է քաղաքակրթութիւնը, կեանքի խելացի արագութիւնը եւ յառաջացած ճարտարագիտութիւններու դարը, բայց զայն կարելի է շտկել դիւրութեամբ:

2. «Պատրաստուիր մարմնամարզութեան»: Սովորութիւն դարձնելով կանուխ արթննալը, մենք քանի մը վայրկեան ազատ ժամանակ պիտի ունենանք, որոնք կարելի է անցնել՝ կատարելով առաւօտեան վարժութիւններու համալիր: Բայց մարմնամարզութիւնը մի խառնէք սփորթով լիարժէքօրէն զբաղելուն հետ: Մարմնամարզութիւնը ուղղուած է ներքին օրկաններու աշխատանքի աշխուժացման, արեան շրջանառութեան բարելավման, կապերու եւ յօդերու մարզումին, որ պիտի օգնէ օրուան ընթացքին խուսափելու սովորական կենցաղային վնասուածքներէ:



րէն: Այդ պատճառով ձեզի համար առանձնացուցէք 10-15 վայրկեան, հանգստացուցէք մկաններու հիմնական խումբերը, կատարեցէք քանի մը պարզ վարժութիւն: Իտէյալական առաւօտեան մարմնամարզութիւնը, զայն բնութեան գիրկին մէջ կատարելն է՝ թոքերը թթուածինով հարստացնելով: Բայց սովորական բնակարանի պայմաններուն մէջ հնարաւոր է պարզապէս օդափոխել սենեակը: Կանոնաւոր կերպով մարմնամարզութիւն կատարեցէք ամէն օր, ներառեալ հանգստեան օրերուն եւ մի մոռնաք անկէ առաջ կիրորնի շերտիկով 1-2 բաժակ տաք ջուր խմել:

3. Տաք եւ պաղ ցնցուղներ. Այո, առաւօտեան ծէսերը պէտք է աւարտել տաք եւ պաղ ցնցուղներով: Տաք եւ պաղ ցնցուղներուն հերթագայութիւնը կ'աշխուժացնէ արեան շրջանառութիւնը, կ'աշխուժացնէ նիւթափոխանակութիւնը, կը բարելաւէ դիմադրողականութիւնը եւ կը մարզէ մարմինը ընդհանուր առմամբ: Մէկ խօսքով, անիկա առողջութեամբ կը լիցքաւորէ ամբողջ օրուան համար: Առաւօտները այս ոչ բարդ սովորութիւնները իրականացնելով՝ պիտի նկատէք, որ «առաւօտը բարի չէ» ասոյթը հաստատ ձեր մասին չէ:

լանաբար անոնց տղամարդիկը ուղղակի տեղեակ չեն այն հետազօտութիւններուն մասին, որոնք ապացուցած են, որ տնային պարտականութիւններուն բաժանումը սիրահարներուն կեանքը աւելի երջանիկ կը դարձնէ: Առաջին այսպիսի հետազօտութիւնը կատարած մասնագէտը ուսումնասիրած է բազմաթիւ զոյգեր եւ եկած այն եզրակացութեան, որ կենցաղային պարտականութիւններուն բաժանումը շարաբերութիւններու ներգաշնակութեան գրաւականն է: Քիչերն են, որ կը սիրեն տնային գործերով զբաղիլ: Սա կայն, եթէ տղամարդը կ'օգնէ իր տիկնոջ, վերջինս կը զգայ, որ զինք կը գնահատեն եւ աւելի քիչ կը վրդովի: Բացի այդ, պարտականութիւններու հաւասար բաժանման պարագային՝ սիրահարները աւելի ուշ կը յօգնին, բան մը, որ կը նշանակէ, որ անոնց

ուժերը պիտի բաւեն մինչեւ ուշ գիշեր: Այս հասարակ գաղտնիքը կրնայ փրկել գանոնք, որոնք նոր կը սկսին ընտանեկան կեանքը: Երկու տարիէն ոչ աւելի ամուսնացած 220 զոյգերու հարցումը ցոյց տուած է, որ պարտականութիւններու հաւասար բաժանումը կ'օգնէ անոնց վերապրելու ընտանեկան առաջին խնդիրները եւ հասնելու փոխըմբռնման: Այսպիսի փոքր բացառապատմանը ցոյց կու տան, թէ որ քան կարեւոր է ընտանեկան կեանքին մէջ կիսել ոչ միայն երջանիկ պահերը, այլ նաեւ ձանձրալի ամէնօրեայ գործերը: Եւ այսպէս, եթէ կ'երագէք ամուր եւ առողջ յարաբերութիւններ ունենալ, մի մոռնաք կիսել կենցաղային գործերը: Տղամարդիկ ուղղակի պէտք է աւելի յաճախ առաջարկեն իրենց օգնութիւնը եւ երջանակութիւնը երկար սպասեցնել չի տար:

ԶՈՅԳԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԸ ԿԻՍԵՆ ՏՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԱԻՆԻ ԵՐՁԱՆԻԿ ԵՆ

Կ'ըսեն, որ իրական տղամարդիկ պէտք է երթան աշխատանքի եւ ընտանիք պահեն: Իսկ անոնց գեղեցիկ կէսերը այդ ժամանակ պէտք է մնան տունը, խնամեն փոքրիկները եւ ընտանեկան յարմարաւէտութիւն ստեղծեն: Սակայն, եթէ ձեր ժամացույցը քանի մը տասնեակ տարիներով ետ չէ մնացած, ուրեմն դուք պիտի ըսէք, որ դերերու արդիւնքի տեղաբաշխումը շատոնց արդէն արդիական չէ:



րուն՝ մաքրութիւն ընել, ընթրիք պատրաստել, ամանները լուայ: Հա-

Այժմ աղջիկները տղամարդոցմէ ոչ պակաս կը հետեւին իրենց ասպարէզին եւ ամէն օր աշխատանքի կ'երթան: Վերադառնալով, սակայն, անոնք ամբողջութեամբ կը լծուին տնային գործե-

Զեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net

«Տխրունի» Ուսանողական Միութեան

Շարունակուած էջ 7-էն

լիսցի Քաջ Պատանի»էն մինչեւ «Դրօշը Հնչակեան», «Ձայն Տուր Ով Ֆետա»էն մինչեւ «Ողջոյն Քեզ Հնչակ», բուռն խանդավառութիւն ստեղծելով մասնաւորաբար պատանիներուն եւ երիտասարդներուն մօտ, որոնք երգիչներուն

ընկերակցելով երգեցին գրեթէ բոլոր երգերը: Հանդիսութեան ընթացքին նաեւ կարճ խօսքեր արտասանեցին Սելլա Աւագեան, Մարի Անն Յովհաննէսեան եւ Յակոբ Մելքոնեան: Աւարտին, օրուան չորս երգիչները, նաեւ հանդիսատեսները միասնաբար կատարեցին «Ուխտի Հրաւէր» երգը:

Տեղի Ունեցաւ

Շարունակուած էջ 7-էն

ուեցան դէպի Սուրբ Երրորդութիւն եկեղեցի, Վեր. Մկրտիչ Գարակէօզեան կատարեց պաշտօնական բացումը վերանորոգ եկեղեցիին:

Քեսապի Հայ Աւետ. Սուրբ Երրորդութիւն եկեղեցին, որ 21 Մարտ 2014-ին գրաւուած, թալանուած եւ ապա հրկիզուածի ենթարկուած էր, այժմ իր վերանորոգ եւ պայծառ սրահներուն մէջ կ'ընդունէր բազմահարիւր հաւատացեալներ, որոնք եկած էին առ Աստուած փառաբանութեան եւ շնորհակալութեան աղօթքներ ու երգեր բարձրացնելու: Կէսօրուայ ժամը 12-ին սկսաւ վերընծայման յատուկ պաշտամունքը, ներակայութեամբ Լաթաքիոյ Նահանգապետին, Կոստակցապետին, պատասխանատուներու, քոյր եկեղեցիներու Հոգեւոր Հովիւներուն եւ Քեսապի պատկան մարմիններու ներկայացուցիչներու:

Քեսապի Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ Հովիւ՝ Պատ. Ժիրայր Ղազարեան առաջնորդեց պաշտամունքը: Բեմի նոր Աստուածաշունչի նուիրումը կատարեց Վեր. Դոկտ. Փօլ Հայտնութեան: Պատ. Միմոն Տէր Սահակեան եւ Պատ. Սեւակ Թրաշեան կատարեցին ընթերցումներ Աստուածաշունչէն: Երգչախումբը հրամցուց երկու երգեր: Քեսապի Հայ Աւետարանական եկեղեցւոյ տարբեր տարիքի զաւակներ արտասանեցին նուիրումի աղօթքներ: Օրուան պատգամը փոխանցեց Վեր. Մկրտիչ Գարակէօզեան, որ ներկայ հաւա-

տացեալները հրաւիրեց քարեղէն կառուցէն անդին նայելու եւ ըլլալու կենդանի եկեղեցի, որուն միջոցաւ Աստուած կը փառաւորուի:

Պատգամէն ետք՝ եկեղեցւոյ վերընծայման աղօթքը կատարեց Վեր. Յարութիւն Սելիմեան, որ նաեւ դրուատեց Սուրբոյ պետական մարմիններու աջակցութիւնը, որ մեծապէս դիւրացուց վերանորոգման աշխատանքները, աւելցնելով թէ Սուրիահայութիւնը անբաժան մասնիկն է Սուրիոյ ժողովուրդին:

Վեր. Փոլ Հայտնութեան փոխանցեց ԿՄ-ի խօսքը, անդրադառնալով կատարուած աշխատանքին եւ անոր յուսադրիչ ազդեցութեան, գնահատանքով ընդգծելով որ այն տարուեցաւ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի զաւակներուն կողմէ, Համայնքապետ՝ Վեր. Յարութիւն Սելիմեանի առաջնորդութեամբ:

Կարդացուեցաւ Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան Վարիչ Տնօրէն՝ Պրն. Զաւէն Խանճեանի խօսքը, ապա Տէրունական աղօթքով եւ Վեր. Գարակէօզեանի առաքելական օրհնութիւնով աւարտեցաւ պաշտամունքը: Ներակայները դուրս եկան զիրար շնորհաւորելով եւ ողջագոյնելով՝ բարձր տրամադրութեամբ:

ՄԱՀԱՆ-Միութեան Նախագահը, Կերտնական Մարմինի Ատենապետն ու անդամները, նաեւ ներկայ Լաթաքիոյ պետական աւագանին շնորհաւորութիւններ ընդունեցին եկեղեցւոյ նորոգուած դահլիճէն ներս:

ԱՍԱԼԱ-Ն ԴՈՒՐՍԵՆ ԵՒ ՆԵՐՍԵՆ

Շարունակուած էջ 13-էն

մենք հալած իւրի տեղ էինք ընդունում նրա ամէն սասան ու արածը: Չեմ ուզում մտածես, թէ մենք կուրօրէն հաւատում էինք նրա ամէն խօսքին: Մենք հաւատում էինք մեր պայքարին, իսկ այդ պայքարի գլուխը Յակոբն էր: Մեզանից ամէն մէկը իր գործի, իր պարտականութեան տէրն էր, իսկ Յակոբը՝ ամէն ինչի: Ուզենք, թէ չուզենք, նա էր ստեղծել ԱՍԱԼԱ-ն ու նրա շնորհիւ էր ԱՍԱԼԱ-ի անունն ու հռչակը տարածուել աշխարհով մէկ: Մենք միայն նպաստել ենք դրան: Բայց ժամանակները փոխուում են, հասկանում ես, ժամանակի հետ փոխուում են նաեւ պայքարի ձեւերն ու մեթոտները...» (էջ 163):

Ծանօթ է, որ ԱՍԱԼԱ-ն դաժան պայքարի մէջ էր մէկ կողմէ թրքական եւ միջազգային հետախուզական ուժերու դէմ, ապա արիւնալի դէպքեր ՀՅԴ-ի հետ, իսկ 1983-ին՝ ներքին արիւնահեղուցիւնները խախտեցին անոր կառուցը, որուն համար պատասխանատու կը նկատուի Մոնթէ Մելքոնեան: Այս ներքին ցնցումներուն մասին կան բաւականին նկատարժան բացառալուծներ, ինկան գոհեր՝ Վիզէն Այվազեան, Խաչիկ Հաւարեան, Կարլէն Անանեան, Դաւիթ Դաւիթեան: Կան վկայութիւններ Յ. Թազուչեանի եւ մտաւորական ուժերու հետ անոր կապերուն, ինչպէս՝ Գէորգ Աճեմեան, Սիմոն Սիմոնեան, Լեւոն Երկաթ, «Սփիւռք» շաբաթաթերթ:

Կ. Վարդանեան մեծ համարումով կը խօսի վաղամեռիկ Յակոբ Տարագճեանի մասին, զայն համարելով գրեթէ համահիմնադիր ԱՍԱԼԱ-ի: Բացառիկ անհատականութիւն, գաղտնապահ, հայրենասէր ու խիզախ, որ զոհ գնաց անողոք հիւանդութեան 1981 Մարտ 17-ին: Իրագործած է բազում գործողութիւններ Թուրքիոյ տարածքին, ուսումնասիրած մարտական գործունէութեանց մանրամասները, եղած եւրոպական եւ միջին-արեւելեան ոստաններ, ունէր կազմակերպչական եզակի կարողութիւն: Իր թաղման կը մասնակցին անուանի յեղափոխականներ, որոնց շարքին Զահէր Խաթիպ, որ եղած է անկեղծ թիկունք մը հայ գիւնեալ պայքարին: Յակոբ Յակոբեան միշտ եղած էր անոր կողքին: Իր մահուանէ ետք կը հիմնուի Յակոբ Տարագճեան Բարեսիրական Միութիւնը: Տարագճեան իր անշնջելի հետքը թողած է ժամանակակից հայոց պատմութեան վրայ:

Քննադատական տեղին ակնարկ կայ հայրենասիրական կենացներով սնանողներու հասցէին. «Եթէ ձեր խմած անհամար

կենացները գորութիւն ունենային, մեր հայրենիքը վաղուց ազատագրուած կը լինէր: Դէ, արի խմենք... Սեբաստիայի կենացը» (Յակոբ Տարագճեանի արմատները Սեբաստիայէն են) (էջ 200): Կ'իմանանք թէ ինչպէս Յակոբ Տարագճեան սորված է ումբեր պատրաստել. ուրեմն սորված է ձկնորսներէ. Կ. Վարդանեան կը գրէ. «Ինչո՞ւ ես կարծում, թէ միայն Պէյրութում էին ձկնորսներն այդքան հնարամիտ: Ես 90-ականներին նման բան տեսել եմ Երեւանում՝ Զանգուի ափերին, երբ մեր ձկնորսները տինամիթ էին պայթեցնում գետում: Միայն թէ Զանգուից աւելի շատ գորտ էր դուրս գալիս ու մէկ էլ պահածոյի ժանգոտած տուփեր» (էջ 230):

Գիրքին մէջ կան բազմաթիւ լուսանկարներ նիւթին հետ առնչուած, ի դէպ շատերը նոր ներկայացուած: Նաեւ թրքական մամուլէն լուսապատճէններ՝ հայերէն թարգմանութիւններով, որոնք կը վերաբերին Թուրքիոյ տարածքին պատահած պայթումներուն: Ապա կը տողանցեն ծանօթներ՝ Վազգէն Սիսեան, Յակոբ Ճուլֆայեան, Արամ Սեփեթճեան, Սաֆօ Օզնայեան, Յակոբ Տիւնեայեան եւ ուրիշներ: Անդրադարձ կայ Վեր. Ճէյմզ Գառնուզեանի կազմակերպած համահայկական երեք համագումարներուն (1979, 1983, 1985 թուականներ), անոր մտայղացած «Արարատիցմ» ի գաղափարախօսութեան: Ընթերցողը հատորը անյազօրէն կարդալով շատ բան կը տեղեկանայ մեր մօտիկ անցեալին: Հեղինակին պատմաբանութեամբ սահուն է, խուսափած խրթնաբանութիւններէ եւ ծանր բռնակազմակերպութիւններէ, ինչ որ սովորական ընթերցողին համար կ'ըլլայ աւելի հասկնալի եւ ընդունելի:

Հիմա հարց մը, ի՞նչ ժանրի կը պատկանի հատորը: Հեղինակ կը բնութագրէ՝ «Իրապատում վէպ». բայց, աւելի կը մօտենայ վաւերական պատմութեան՝ մօտիկ անցեալին պատահած՝ նահատակ եւ ապրող դէպքերով: Սա մերօրեայ տարեգրութիւնն է իր հերոսական եւ խնդրալարոց դրուագներով, վառ դերակատարներով եւ ազատագրական պայքարի ճամբուն վրայ ինկած նուիրեալներու փաղանգով:

Գիրքը խմբագրած է Նունէ Վարդանեան: Խնամեալ տպագրութիւն մը իր հարուստ բովանդակութեամբ, որուն հարկադրաբար պիտի դիմեն անոնք, որոնք կ'ուզեն սերտել 1975-85 թուականներուն հայ մարտական բազուկին պատմութիւնը:

Հեղինակը հանրայինացուց շատ մը իրողութիւններ, որուն համար, ինչ խօսք, պիտի մնանք շնորհակալ:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ
Թերեզ Ա. Փոստալիս-Մեթիսթ-ձեռնարկ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Գօճապապեաններուն:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel:----- Email:-----

ՎԱՐՉՈՒ ՄՐԱՅ
ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՆՈՂԱՅՆԵԼ (626) 797-7680

«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԱՅԱՆ»

Շարունակուած էջ 8-էն

Այսօրինակ միջոցներու որդեգրումը կը մատնէ նաեւ, որ Ագրպէյճանի համար գէթ այս պահուն սպառած են հայկական սահմանները թափանցելու կամ նույնիսկ տարբեր տեսակի առաւելութիւններ գրանցելու բոլոր միջոցները: Ու այս մօտեցումին դիմաց յատակ է, որ մենք ակնատես կրնանք դառնալ միջազգային թատերաբեմին վրայ օգտագործուող նոր սաղրանքներու, որոնց ճնշիչ մասը կապ ունի տեղատուական պատերազմին մէջ ու այդ պատե-

րազմէն միաւորներ կորզելու մօտեցումներուն հետ:

Ու այս պարագային է նաեւ, որ, ինչպէս Արցախի Հանրապետութեան նախագահի մամլոյ խօսնակը ըսած է, «Մայր Հայաստանն ու սփիւռքը ճշմարտութիւնը աշխարհին ներկայացնելու հարցով կարեւոր ընելիք ունին»:

Նոր տեսակի սաղրանքներու գործի դրուելը սպասելի է, մանաւանդ որ Պաքուի իշխանութիւններուն «ներքին խոհանոց»ը իր հանրութեան ուշադրութիւնը մոլորեցնելու խիստ պահանջը ունի:

ՎԱՐԴԱՎԱՌԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԱՐԱԾԱՆԻ ԱՓԻՆ

Շարունակուած էջ 16-էն

նախմբի՛ր, Աստղիկի ու Նար Ծովինարի իմաստութեան լոյսի պատումները հոսի՛ր գաւակներէդ սրտերին, նախնիներէդ Արա աստուծոյ կրակի ու լոյսի բոցերով վառուէին նրանց հոգիները: Մանչերիդ հետ գնա՛ Միհրի արեւի տաճար, նրա առաջին լոյսի շողերով ցօղի՛ր նրանց աչուկները, թեւերիդ վրայ նրանց պահած բարձրացիր՛ մեհեան, ատրուշանի կրակով Արա աստուծոյ լոյսը ցանի՛ր նրանց դէմքերին, որ այնտեղ վառուէր հին աստուածներէդ ոգեղէն լոյսը: Նար Ծովինարի ջուր ցանի՛ր նրանց մարմիններին, քու նախնիներէդ տիեզերական հաւատքի հուրով զօրանան նրանց իրանները:

Ո՞վ Արմին-Հայ մարդ, չե՞ս հաւատում ասածիս, մի պահ գոցի՛ր ակներդ, բացի՛ր երեւակայութեանդ պաստառները, քեզ էլ տեսնելու ես նախնիներէդ Վարդավառին նրանց հետ պարի ելած, հաւատա՛ քու ցեղիդ, հաւատա՛ նրանց բնութեան արարչութեանը: Փլուել էին պարերի կլոր շարքերը, թագաւորներ, իշխաններ, թագուհիներ, աշխարհական մարդիկ ողջագուրուել, ժպտագին համբոյրներ շողել իրարու քրտնաթոր, արեւած կարմիր երեսներին, բարի Վարդավառ մաղթել Աստղիկին, Վահագնին, Նար Ծովինարին, որ ջրի արարման յաւերժութիւն լինէր: Վարդավառ էր, կարգն էր այդպէս: Արմին-Հայերի շէնքերի մարդիկ բացատը լցնում իրենց հետ բերած կթոցներով լի մրգերով, կեղրոնում շարում գինիով լեցուն սափորներ: Վարդավառ էր, նրա արթնած իմաստութեամբ, գինիով պիտի արբենային: Արջուներ են գոհաբերել Աստղիկի ու Նար Ծովինարի առաջ, արիւն լեղել նրանց ճակատներին:

Վարդավառ: Հայոց լեռնաշխարհի լանջերին վառուող ծաղկունքի, նրա հովիտներում արեւաշող կարմիր վարդերի, սիրոյ ու գեղեցկութեան աստուածուհի՛ Աստղիկի ու Նար Ծովինար դիցուհու ջրերի արարման փառաբանման Վարդավառի տօնախմբութիւններ էին: Արմին քերթողներ, ծաղկի, սիրոյ, լոյսի, կենարար ջրին նուիրուած տաղեր էին յօրինել, երգեր հիւսել, որոնց հէքիաթային արարումները սքանչանքից Արմին-Հայերի սրտերին սարսուռ իջել:


Վարդավառ: Վառուող արեւաբոյր վարդերին, կենարար ջրերի օրհնութեանը, պտղաբերութեանը, արգասաւորութեանը նուիրաբերուած տօնախմբութիւններ էին:

Արեւի լոյսից ու երկնքից իջած ջրերից պայթած ծիածանի հազար գոյների ծաղիկներ ու վարդեր էին նուիրել իրար, իրենց հրաբորբ սիրոյ երգիչներին, բնութեան հրաշավառ հէքիաթը իջնէր նրանց սրտերին: Սիրոյ խայտանքով աղանիներ էին երկինք թռցրել, որ նրանց սիրոյ ճախրանքով արբենային, կտուցներին ծաղիկներ դրել, որ տանէին իրենց աստուածների տիեզերական տաճարներ:

Թագուհիներին թեւանցուկ արած թագաւորներ, իշխաններ, շինականներ, վարդերի ու լեռների լանջերի ծաղկունքի փունջեր վեր պահած՝ մօտեցել Աստղիկին ու Նար Ծովինարին: Ծաղիկ էր հոսել նրանց իրաններին: Մեհեանի քուրմերը հաւատացել, որ Աստղիկ ու Ծովինար Մասիսի լանջերի ձնծաղիկի բոյլերից էին յառնել: Շինականները, նորէն բոլորին բացատ հրաւիրել, իրենց մարաններում հասունացած կարմիր կրակ գինի լցրել նրանց թասերին, առանց դասի խորութեան այն իրար զարկել, Վարդավառեան ողջոյն մաղթել, գինի-գինի ըմպել, արբեցել, գինի շաղ տուել իրար վրայ, գինի ցօղել Աստղիկի ու Ծովինարի վրայ, որոնց իրաններից կարմիր կրակ էր շիթ-շիթ հոսել:

Ծովինարից խնդրել էին առատ ջուր իրենց Սրբազան Լեռնաշխարհի հանդերին, Աստղիկին խնդրել, արգասաւորութիւն, պտղաբերութիւն լինէր: Աստղիկն էր բացատ ելել, կլոր շարքերով խմբուել էին նրա շուրջը, ծիրանափողերը բնութեան հեւքի մեղեդիներ էին հնչել: Աստղիկը, արեւահուր վարսերը ետին հոսած, մշուշոտ հանդերձը իրանին մենապարի էր ելել: Հովիկների նման մեղմիկ հոսել էր իրանը, բացատով անցած զեփիւռի թովչանքից Տուչպուհա ծովակի ալեակների նման փրփրել, Միհր աստուծոյ լոյսի շողերից հալուել էր մշուշոտ հագուստը, լուսնի անուշ դէմքով սպիտակ իրանն էր արեւազալի լոյսով փայլել: Նար Ծովինարն էր սափորը ուսին ջուր հոսել Աստղիկի վրայ, պարման-պարմանուհիներ նրա իրանից շիթերով հոսած ջուրը ըմպել: Բոլորին-բոլորին տարել Արածանի, կանչել մտնել ջրեր, ափերով, թասերով ջուր էին ցանել իրար վրայ: Պարմանները, պարմանուհիների իրաններից հոսած ջուրն են անյազ ըմպել, ճողքել Արածանի ջրերը, անցել միւս ափ՝ արգասաւորութեան հրավառութիւն տօնախմբել:

Reimagining a Lost Armenian Home



MEET THE AUTHOR: July 25 7:30pm
Armen T. Marsoobian
ABRIL Bookstore

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

Հետաքրքրուած ե՞նք իրենց փոխարժեքով ստանալ՝
• Հայկական երգարաններ
• Կիլիկիոյ պատմական գիրքեր
• Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր
Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ:

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-354-5924
vamedia@yahoo.com



Ռոջեր Ֆեդերերի Ռեկորդային 8-րդ Տիտղոսն Ուիմբլդոնում

Շուկչարացի Ռոջեր Ֆեդերերը 19-րդ տիտղոսը նուաճեց թենիսի «Մեծ սաղաւարտի» մրցաշարերում՝ այդ ցուցանիշով թարմացնելով սեփական ռեկորդը:



Ուիմբլդոնի մրցաշարի տղամարդկանց մենախաղի եզրափակիչում 35-ամեայ Ֆեդերերը 3 սեթում յաղթեց խորուաթ Մարին Չիլիչին՝ 6:3, 6:1, 6:4: Մրցախաղը տևեց 1 ժամ 41 րոպէ:

Ընդ որում՝ աշխարհի 5-րդ ռակետն այս մրցաշարում անցկացրեց 7 մրցախաղ եւ չպարտուեց ոչ մի սեթ: Սա Ռոջեր Ֆեդերերի ռեկորդային՝ 8-րդ տիտղոսն էր Ուիմբլդոնում: Այդ ցուցանիշով շուկչարացի թենիսիստը գերազանցեց ամերիկացի Պիտ Սամպրասի եւ բրիտանացի Ուիլյամ Ռոուսնշոուի ռեկորդները: Նրանք Ուիմբլդոնում յաղթել էին 7-ական անգամ:

28-ամեայ Չիլիչը Ուիմբլդոնի մրցաշարի եզրափակիչում հանդէս եկաւ առաջին անգամ: Խորուաթ թենիսիստը «Մեծ սաղաւարտի» մրցաշարերում ունի մէկ տիտղոսը, որը նուաճել է US Open-2014-ում:

Յիշեցնենք, որ այս տարի Ուիմբլդոնի յաղթողի տիտղոսը չէր կարողացել պաշտպանել աշխարհի առաջին ռակետ էնդի Մարեյը, որը քառորդ եզրափակիչում պարտուեց էր ամերիկացի Սեմ Կուերիին:

«Մեծ սաղաւարտի» մրցաշարերում երկրորդ ամենաշատ տիտղոս նուաճած թենիսիստն սպանացի Ռաֆայել Նադալն է, որն ունի 15 տիտղոս: Եռեակը եզրափակում է լեգենդար ամերիկացի Պիտ Սամպրասը՝ 14 տիտղոս:

Գաբրիյէ Մուզուրուսայի Առաջին Տիտղոսը Ուիմբլդոնում

Թենիսի Ուիմբլդոնի մրցաշարի կանանց մենախաղի յաղթողի տիտղոսը նուաճեց սպանուհի Գաբրիյէ Մուզուրուսան:



Եզրափակիչում աշխարհի 15-րդ ռակետը 7:5, 6:0 հաշուով առաւելութեան ասաւ ամերիկուհի Վինուս Ուիլյամսի նկատմամբ: Մրցախաղը տևեց 1 ժամ 17 րոպէ:

Սա 23-ամեայ Մուզուրուսայի երկրորդ յաղթանակն էր «մեծ սաղաւարտի» մրցաշարերում: 2016-ին նա յաղթել էր նաեւ «Ռոլան Գարոսում»: Ուիմբլդոնի մրցաշարի եզրափակիչում սպանուհին հանդէս եկաւ երկրորդ անգամ, իսկ առաջինը եղել էր 2015-ին:

37-ամեայ Վինուս Ուիլյամսը «Մեծ սաղաւարտի» մրցաշարերի 7-ակի յաղթող է, իսկ Ուիմբլդոնում նա յաղթել է 5 անգամ (2000, 2001, 2005, 2007, 2008թթ.):

Յիշեցնենք, որ Ուիմբլդոնի մրցաշարի կանանց մենախաղի գործող յաղթողն էր ամերիկուհի Սերենա Ուիլյամսը, որը յղիութեան պատճառով այս տարի չի մասնակցում մրցաշարին:

Արթուր Աբրահամը Չկարողացաւ Նուաճել IBO-ի Ախոյեանական Գօտին

Արթուր Աբրահամին չյաջողուեց նուաճել պրոֆեսիոնալ բռնցքամարտի երկրորդ միջին քաշային կարգում IBO վարկածով աշխարհի ախոյեանի տիտղոսը:



Լոնտոնի «Ուեմբլի» սաղարմում կայացած 12 ռաունդանոց ախոյեանական մենամարտում 37-ամեայ Աբրահամը հանդիպեց այդ տիտղոսը պաշտպանող բրիտանացի Քրիս Եուբենք կրտսերի հետ եւ պարտուեց մրցավարների միաձայն որոշմամբ: Գրանցուեց 118:110, 118:110, 120:108 հաշիւը:

Բրիտանացի բռնցքամարտիկն աւելի արագ էր, աւելի ակտիւ ու դիպուկ: Նա հենց սկզբից ունէր առաւելութիւն եւ աստիճանաբար մեծացնում էր այն, իսկ Աբրահամի ընտրած պաշտպանողական մարտավարութիւնն այս անգամ չաշխատեց:

Եուբենքը բաւական վտանգաւոր էր գրոհում, իսկ հայ բռնցքամարտիկի հարուածները ոչ միշտ էին հասնում նպատակին: 5-րդ ռաունդում Աբրահամի քիթն արնահոսեց, սակայն դա չխանգարեց շարունակել մենամարտը: Վերջին ռաունդներում բրիտանացու առաւելութիւնն ակնյայտ էր: Նա կարծես ցանկանում էր յաղթանակի հասնել նոկաուտով, սակայն չստացուեց: Արթուր Աբրահամը դիմացաւ մինչեւ վերջ, թէեւ այս մենամարտը, մեղմ ասած, լաւագոյններից չէր նրա կարիերայում:

Երկու քաշային կարգերում (IBF-ի միջին քաշային կարգ, WBO-ի երկրորդ միջին քաշային կարգ) աշխարհի նախկին ախոյեան Արթուր Աբրահամը 52-րդ մենամարտն անցկացրեց պրոֆեսիոնալ ուինգում, որում կրեց 6-րդ պարտութիւնը (46 յաղթանակ):

Հենրիխ Մխիթարեանի Կոլը «Մանչեսթեր Եունայթեդին» Օգնեց Յաղթել «Գելաքսիին»՝ 5:2

Լոս Անճելեսում հաւաքը շարունակող «Մանչեսթեր Եունայթեդին» առաջին ընկերական հանդիպումն անցկացրեց ԱՄՆ-ում: Անգլիական ակումբը մրցեց «Լոս Անճելես Գեալքսի» հետ եւ առաւելութեան հասաւ 5:2 հաշուով:



«Մանչեսթեր Եունայթեդին» հանդէս եկաւ 2 տարբեր կազմերով, իսկ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը փոխարինման դուրս եկաւ ընդմիջմանը եւ դարձաւ կոլի հեղինակ: 67-րդ րոպէին Մխիթարեանը հաշիւը դարձրել է 4:0:

FIDE Grand Prix. Լեւոն Արոնեանը Չրկուեց Մրցանակային Տեղ Չբաղեցնելու Հնարաւորութիւնից

Շուկչարիայի ժրնէ քաղաքում աւարտին մօտեցող FIDE Grand Prix շարքի երրորդ մրցաշարի նախավերջին՝ 8-րդ տուրում ռուսաստանցի Եան Նեպոմյաչչից կրած պարտութիւնից յետոյ Լեւոն Արոնեանը զրկուեց մրցանակային տեղ զբաղեցնելու հնարաւորութիւնից:

Վերջին տուրից առաջ հայկական շախմատի առաջատարն ունի 3.5 միաւոր եւ բաժանում է 14-15-րդ տեղերը:

Մրցաշարային աղիւսակը միանձնեայ գլխաւորում է Թեյմուր Ռաջաբովը, որը հաւաքել է 5.5 միաւոր: 2-3-րդ տեղերը բաժանող ռուսաստանցիներ Ալեքսանդր Գրիշչուկն ու Եան Նեպոմյաչչին ունեն 5-ական միաւոր: Վերջին տուրում Նեպոմյաչչին սպիտակներով կը խաղայ Ռաջաբովի հետ, իսկ Գրիշչուկը սեւերով ուժերը կհափի հոլանդացի Անիշ Գիրիի հետ:

Յիշեցնենք, որ նախորդ 8 տուրերում Լեւոն Արոնեանը տարել էր մէկ յաղթանակ, կրել 2 պարտութիւն եւ 5 պարտիա աւարտել ոչ ոքի: 9 տուրով անցկացուող մրցաշարին մասնակցում են 18 շախմատիստներ:

Արաբական 6 Երկրներ Պահանջել Են Քաթարին Չրկել ԱԱ-2022-ի Անցկացման Իրաւունքից

Արաբական 6 երկրներ խմբակային նամակ են ուղարկել ՖԻՖԱ-ին՝ պահանջելով Քաթարին զրկել ֆուտպոլի 2022թ. աշխարհի առաջնութեան անցկացման իրաւունքից: Այդ մասին յայտարարել է ՖԻՖԱ-ի նախագահ Ջանի Ինֆանտինոն:

«Այդ երկրները ՖԻՖԱ-ին նախագգուշացրել են երկրպագուներին սպառնացող վտանգի մասին մի երկրում, որը համարում է ահաբեկչութեան բազա», - Ինֆանտինոյի խօսքը մէջբերում է The Local-ը:

Յիշեցնենք, որ Յուլիսի 5-ին արաբական 5 երկրներ (ԱՄԷ, Եգիպտոս, Բահրեյն, Սաուդյան Արաբիա, Եմեն եւ Լիբիա) որոշել էին խզել Քաթարի հետ դիւանագիտական կապերը՝ այդ երկրին մեղադրելով ահաբեկչական խմբաւորումներին աջակցելու եւ Բահրեյնի ներքին գործերին խառնուելու մէջ: Աւելի ուշ նրանց միացել էին եւս մի քանի երկրներ:

ԱԱ-2022-ը Քաթարում Անցկացուելու է Նոյեմբերի 21-ից Դեկտեմբերի 18-ը:



Save Support Sustain SYRIAN ARMENIAN RELIEF FUND Syrian Armenian Relief Fund P. O. Box 1948 Glendale, CA 91209-1948 www.syrianarmenianrelieffund.org